# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԷ. ՏԱՐԻ ԹԻՒ 27 (1327) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 28, 2007
VOLUME 27, NO. 27 (1327) SATURDAY, JULY 28, 2007

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

## «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ» ՌԱՏԻՈԿԱՅԱՆԻ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԸ ԿԸ ԴԱԴՐԻ ՕԳՈՍՏՈՍ 9-ԻՆ

*Հայաստանի Հանրային ռատիօն մերժած է երկարաձգել «Ազատութիւն» ռատիոկայանի հեռարձակման պայմանագիրը, որ կ՛աւարտի Օգոստոս 9-ին:*

*Ամերիկեան հեռարձակումներու տնօրէններու խորհուրդը չէ յաջողած համաձայնութիւն ձեռք ձգել Հայաստանի հանրային ռատիոյի հետ՝ «Ազատութիւն» ռատիոկայանի հաղորդումներու հետագայ վերահեռարձակման շուրջ:*

*«Ազատութիւն» ռատիոկայանը վերահսկող գործակալութիւնը՝ Ամերիկեան հեռարձակումներու տնօրէններու խորհուրդը Յուլիս 24-ի երեկոյեան, Ուաշինկթընի մէջ տարածած է հաղորդագրութիւն մը, մտահոգութիւն յայտնելով այն կապակցութեամբ, որ Հայաստանի Հանրային ռատիօն հրաժարած է երկարաձգել «Ազատութիւն» ռատիոկայանի հայկական ծառայութեան ծրագրերու հեռարձակումը շարունակելու վերաբերեալ պայմանագիրը:*

*Ազգային Ժողովրդավարական Միութեան (ԱԺՄ) նախագահ Վազգէն Մանուկեան կարծիքով, «Ազատութիւն» ռատիոկայանի հետ պայմանագրի երկարաձգման մերժումը «ո՛չ տեխնիկական հարցերի հետ է կապուած, ո՛չ էլ ֆինանսական հարցերի». - «Ուղղակի մինչեւ վերջ ժողովրդին պահել ապաինֆորմացուած վիճակում եւ քարոզել այն, ինչ որ իրենք են ուզում»:*

*Հայաստանի մէջ «Ազատութիւն» ռատիոկայանի գործունէութեան մասին Մանուկեան ըսած է. - «Այն ֆինանսաւորւում է Միացեալ Նահանգներու Գոնկրէսի կողմէ, բայց Հայաստանում ես երբեք չեմ լսել, որ այդ ռատիոկայանը յատուկ քարոզչութիւն իրականացնի Միացեալ Նահանգների արտաքին քաղաքական գծի վերաբերեալ... Պէտք է ասել, որ «Ազատութիւն»-ը ամենալսուող ռատիոկայանն է շրջաններում, գիւղերում, Երեւանում»:*

*Անկախ պատգամաւոր Վիկտոր Դալլաքեանի կարծիքով՝ «դա իշխանութիւնների հրահանգն է». - «Այն, ինչ չյաջողուեց Ազգային Ժողովի միջոցով, փորձում են կատարել այլ ճանապարհով: Ես դա համարում եմ դատապարտելի երեւոյթ եւ անընդունելի քայլ խօսքի ազատութեան դէմ»:*

*«Ժառանգութիւն» ընդդիմադիր կուսակցութեան խմբակցութեան պատգամաւոր Անահիտ Բախշեան իր կարգին յայտնեց. - «Միայն նեղ անձնական շահերով առաջնորդուելու չակերտուած քաղաքական կամքը, ցաւօք սրտի, մեր երկրում պետական իշխանութեան կառավարման գործելակերպ է»:*

## ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆ ԸՆՏՐՈՒԵՑԱՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԱԽԱԳԱՀ



Լեռնային Ղարաբաղի նորընտիր նախագահ Բակօ Սահակեան

*Յուլիս 19-ին Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցած նախագահական ընտրութիւններու արդիւնքով յաղթանակի հասաւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) նախկին պետ Բակօ Սահակեան, որ կը վայելէր Արցախի մէջ գործող քաղաքական գրեթէ բոլոր ուժերու եւ նաեւ չրջանաւարտ նախագահ Արկադի Ղուկասեանի զօրակցութիւնը:*

*ԼՂՀ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի նախագահ Սերգէյ Նասիբեանի հրապարակած տուեալներու համաձայն քուէարկութեան մասնակցած է 71,287 քաղաքացի, կամ ընտրութեան իրաւունք ունեցողներու 77, 36 տոկոսը: Բակօ Սահակեանի ի նպաստ քուէարկած է 57, 798 մարդ, կամ ընտրութեան մասնակցածներու 85,36 տոկոսը, Մասիս Մայիլեանին իրենց ձայները տուած են 8,270 կամ 12,21 տոկոսը: Մնացեալ թեկնածուները ստացած են մէկ տոկոսէն պակաս ձայն:*

*Պարտուած թեկնածուներէն Մասիս Մայիլեան յայտարարեց, որ Բակօ Սահակեանին կը նկատէ օրինաւոր ընտրուած նախագահ:*

*«Երբ Կենտրոնական ընտրական յանձնաժողովը պաշտօնապէս կը յայտարարի նախնական տուեալները, ես անպայման կը շնորհաւորեմ յաղթած թեկնածուին: Բակօ Սահակեանին համարում եմ օրինական ընտրուած նախագահ: Յարգում ենք ժողովրդի կատարած ընտրութիւնը», ըսաւ Մայիլեան:*

## ՌՈՒՏՈԼՖ ՓԵՐԻՆԱ. «ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ՉԷ ՃԱՆՉՑԱԾ ՂԱՐԱԲԱՂԸ, ՀԵՏԵՒԱԲԱՐ՝ ՉԻ ՃԱՆՉՆԱՐ ՀՈՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

*Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մէջ կատարուած նախագահական ընտրութիւններուն կապակցութեամբ, Հայաստանի մօտ Միացեալ Նահանգներու գործերու հաւատարմատար Ռուտոլֆ Փերինա անցեալ շաբթուայ ընթացքին կատարեց կտրուկ յայտարարութիւններ, ըսելու համար թէ, իր երկիրը չի ճանչնար Լեռնային Ղարաբաղը ու հոն կայացած ընտրութիւնները:*

*«Աշխարհի ոչ մէկ երկիր, այդ շարքին նաեւ Ամերիկայի Միացեալ Նահանգները, Լեռնային Ղարաբաղը չէ ճանչցած իբրեւ անկախ պետութիւն: Հետեւաբար, մենք չենք ճանչնար նաեւ այդ ընտրութիւնները», - յայտարարած է դեսպան Փերինա «Ազատութիւն» ռատիոկայանին տուած հարցազրոյցի ընթացքին:*

*«Այդ իսկ պատճառով մենք պաշտօնապէս դիտորդներ չենք ուղարկած, ու նաեւ գնահատական չենք տուած այդ ընտրութիւններուն», - ըսած է ամերիկացի դիւանագէտը՝ աւելցնելով. - «Բայց մենք յոյս ունինք, որ այդ ընտրութիւնները որեւէ կերպ չեն խոչընդոտէր ընթացող բանակցութիւններուն, եւ յոյս ունինք, որ այդ բանակցութիւնները կը շարունակուին նորմալ ընթանալ»:*

*Ռուտոլֆ Փերինա 2001-2004 թուականներուն ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ամերիկացի համանախագահն էր: Այն հարցին, թէ արդեօք կապ կա՞յ Հայաստանի ժամանակաւոր հաւատարմատար իր նշանակուելուն եւ հակամարտութեան կարգաւորման գործընթացի միջեւ, Փերինա ըսած է,- «Ես եղած եմ համանախագահ, բայց հիմա տով չեմ զբաղիր, եւ այդ կարգավիճակով չէ, որ վերադարձած եմ Հայաստան»:*

*«Թէեւ ես ուղղակիօրէն չեմ մասնակցիր բանակցութիւններուն, բայց կ՛ուզեմ վստահեցնել ձեզի, որ ղարաբաղեան խնդիրի կարգաւորումը Միացեալ Նահանգներու համար առաջնահերթութիւն է, քանի որ մենք կը տեսնենք, որ այս շատ կարեւոր է Հայաստանի, Ատրպէյճանի եւ այս տարածաշրջանի կայունութեան համար», - աւելցուցած է Ռուտոլֆ Փերինա: - «Մենք անցեալին այս ուղղութեամբ շատ ակտիւօրէն աշխատած ենք, եւ համոզուած եղէք, որ Միացեալ Նահանգները պիտի շարունակէ աջակցիլ խնդրի կարգաւորման՝ նաեւ ապագային»:*

## «ՌԱՏԻՕ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ԴԱԴՐԵՑՈՒՄԷՆ ԵՏՔ ՈՒՐՈՒԿՈՒԷՅԻ ՄԷՋ ԿԸ ՍԿՍԻ ԳՈՐԾԵԼ «ՌԱՏԻՕ ԱՐԱՔՍ»

*Ուրուկուէյի մայրաքաղաք Մոնթեվիտէոյի մէջ տասնամեակներէ ի վեր գործող «Ռատիօյ Արմենիա» հայկական ամենօրեայ հաղորդումը վերջին անգամ ըլլալով հնչած է Յուլիսի 8-ին, փակուելու համար պետական մէկ որոշումով:*

*Արդարեւ՝ Ռուբէնեան ընտանիքին պատկանող ռատիոյի չորս ալիքներու՝ երեք «էֆ-էմ» եւ մէկ Միջին ալիք, արտօնագիրները խլուած են հարկային խախտումներու մեղադրանքով:*

*«Ռատիօյ Արմենիայի» անձնակազմի եւ համայնքի կարգ մը կազմակերպութիւններուն կողմէ բարձրացած բողոքները՝ փրկելու համար չորս ալիքներէն առնուազն Միջինը, որու վրայ օրական երկու ժամ կը սփռուէին հայկական հաղորդումները, մնացած են ապարդիւն:*

*Պետական ներկայացուցիչներ հանդիպում ունենալով Թեմի առաջնորդ Յակոբ Արք. Գըլըճեանի հետ հաւաստիացուցած են թէ, առնուած որոշումները ուղղուած չեն հայ համայնքի դէմ, սակայն ոչ մէկ երաշխիք տուած են, որ ռատիօալիքը հետագային կը տրամադրուի հայ համայնքին:*

*«Ռատիօյ Արմենիայի» դադրեցումէն անմիջապէս ետք, տեղական այլ ալիքի մը վրայ կարելի եղած է ապահովել շաբաթական երկու եւ կէս ժամ հաղորդում՝ «Ռատիօյ Արաքս» անուան տակ:*

*«Ռատիօյ Արաքս»-ի նախաձեռնողն է «Ռատիօյ Արմենիայի» հաղորդավար Տիէկօ Գարամանուկեան:*

*Հարաւային Ամերիկայի հայութեան ձայնը նկատուող «Ռատիօյ Արմենիա» հիմնադրուած էր 1935-ին Ընկ. Յարութիւն Ռուբէնեանի կողմէ, դառնալով կամուրջ՝ Հայաստանի եւ հայկական այլ գաղութներու հետ: Իր մահունէ ետք, Ռատիոկայանի անխափան գործունէութիւնը ապահոված էին Տիկ. Արաքսի Ռուբէնեան եւ իր զաւակները:*

*«Մենք քաղաքական հետապնդումներու զոհը դարձանք», յայտարարած է Պերճ Ռուբէնեան, հաղորդելով «Ռատիօյ Արմենիան» ստիպողաբար փակելու տխուր լուրը:*

### «ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

*Տարեկան արձակուրդի առիթով «Մասիս» լոյս պիտի չտեսնէ յաջորդ երկու շաբաթներուն: (Օգոստոս 4ին եւ 11ին): Արձակուրդի ընթացքին փակ է նաեւ խմբագրատունը:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԵՒ ԹՈՅՆ, ԵՒ ԴԵՂ

*Ինչպէս յայտնի է, վերջին 20 տարում Հայաստանում ամէն ինչ սկսւում է Ղարաբաղից: 88-ի յանուն անկախութեան եւ ժողովրդավարութեան պայքարի հիմնական իմպուլսը տուեց Ղարաբաղը: 98-ի իշխանափոխութեան պատրուակը Ղարաբաղն էր: 90-ականների այլանդակութիւնների խորացնողն ու բազմապատկողն այսօր ղարաբաղեան ծագում ունեցող ՀՀ ղեկավարներն են: Յայտնի ճշմարտութիւն է՝ չկայ բացարձակ թոյն եւ բացարձակ դեղամիջոց, ամէն ինչ կախուած է օգտագործման չափից եւ տեղից: Ղարաբաղը նոյնպէս կարող է հանդէս գալ ե՛ւ որպէս դեղ, ե՛ւ որպէս թոյն: Երբ ինձ փողոցում մարդիկ են բռնացնում եւ դառնացած ասում՝ «Երեւանում տղամարդ չկայ, հալալ ա սրանց, որ եկել՝ սաղին կգացրել են»՝ դրանք նողկալի, լիւմպենական խօսակցութիւններ են, որոնց, ճիշդ է, «թոն տուեց» ՀՀ ներկայիս նախագահը իր՝ «ո՞վ է այն տղամարդը» յայտնի տղայական, պետական գործչին ոչ վայել բացականչութեամբ: Սա, անշուշտ, թոյն է, որն առաջացել է Ղարաբաղի «սխալ եւ չդոզաւորուած կիրառումից»: Այդ «թոյնի» մի մասը առասպելն է ղարաբաղցիների մասին՝ որպէս նէնգ, ագրեսիվ եւ հայ մշակութային աւանդոյթներից շատ հեռու հրէշների: (Պարզ է, թէ ում պատճառով է ստեղծուել այդ առասպելը): Եւ պատահական չէ, որ նոյնիսկ դրական համատեքստում ղարաբաղցիներին յիշատակելիս անպայման նշում են յայտնի զինուորականներին: Իսկ ինչո՞ւ ոչ, ասենք, Մուրացանին, Վաղարշ Վաղարշեանին կամ Ալեքսանդր Մելիք-Փաշաեւին: Կամ ինչո՞ւ չյիշել, որ հենց Արցախն էր Հայաստանի մարզերից մէկը, որտեղ Մաշտոցը հիմնել էր առաջին «հայատառ» դպրոցները:*

*Բայց թոյնի կողքին միշտ էլ կայ դեղամիջոցը: Դրա արտայայտութիւնն ունենք՝ ի դէմս Արկադի Ղուկասեանի, որը երեք տարի շարունակ կրկնում էր, որ չի պատրաստւում առաջադրուել երրորդ անգամ: «Աչքը վախեցած» լրագրողները, բնականաբար, կասկածում էին պարոն Ղուկասեանի անկեղծութեանը, եւ ԼՂՀ երկրորդ նախագահը ստիպուած էր դա կրկնել գրեթէ ամէն օր: Նման միանշանակ հաւաստիացումներ Ռոբերդ Քոչարեանից մենք, կարծես թէ, չենք լսել, ինչը որոշակի կասկածների տեղիք է տալիս՝ գուցէ ՀՀ նախագահը ինչ-որ խորամանկ «իրաւական» ելքե՞ր գտնի՝ աթոռին մնալու համար: Մի խօսքով, այս առումով Ղարաբաղը Հայաստանից մի քայլ առաջ է՝ քաղաքակիրթ եւ ժողովրդավարական պետութիւն կառուցելու գործում: Երկրորդ «դեղամիջոցը» երէկ տուեց ԼՂՀ նախագահի՝ արդէն նախկին թեկնածու Մասիս Մայիլեանը. Նա յայտարարեց, որ, չնայած ընտրութիւններում թոյլ տրուած խախտումներին, շնորհաւորելու է նախագահ ընտրուած Բակօ Սահակեանին: Դա էլ քաղաքական մշակոյթի մի օրինակ է, որով Հայաստանը 17 տարուայ ընթացքում չի կարող պարծենալ: Այդ երկու փաստերը աղոտ յոյս են տալիս, որ այս անգամ էլ գուցէ Հայաստանի համար մի ինչ-որ լաւ բան Ղարաբաղից կը սկսուի:*

*...Տատս ֆրանսերէն էր սովորել Շուշիի գիմնազիայում՝ 20-րդ դարի սկզբին, եւ յետոյ հնարաւորութիւն չէր ունեցել լեզուն ուսումնասիրելու: Բայց մանկութեան գիտելիքներն այնքան ամուր էին, որ նա մինչեւ խոր ծերութիւն ազատ խօսում եւ կարդում էր այդ լեզուով:*

**ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**
**«ԱՌԱՒՕՏ»**

# ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ՌՈՒԴՈԼՖ ՓԵՐԻՆԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԽՕՍՔԸ

*Լեռնային Ղարաբաղում անցկացուած նախագահի ընտրութիւնների փաստի հետ չեն համակերպւում ոչ աշխարհակալի յաւակնութիւններ ունեցող երկրները, ոչ էլ այդ երկրների շահը իրենց նաւթային ռեզերվուարներին յարմարեցրած Ատրպէյճանը: Թէպէտ ընտրութիւններն արդէն կայացել են եւ մի երկու օրից կ'արձանագրուի, որ շրջուեց ԼՂ անկախութեան պատմութեան հերթական էջը, բայց դեռ հնչում են դատապարտող յայտարարութիւններ: Օրինակ՝ Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակաւոր հաւատարմատար Ռուդոլֆ Փերինան յայտարարել է, թէ աշխարհի ոչ մի երկիր, այդ թւում՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները, Լեռնային Ղարաբաղը չի ճանաչել իբրեւ անկախ պետութիւն, եւ հետեւաբար ԱՄՆ-ն չի ճանաչում նաեւ Յուլիսի 19-ն կայացած ԼՂ նախագահի ընտրութիւնները: «Այդ իսկ պատճառով մենք պաշտօնապէս դիտորդներ չենք ուղարկել, ու նաեւ գնահատական չենք տուել այդ ընտրութիւններին, բայց մենք յոյս ունենք, որ այդ ընտրութիւնները որեւէ կերպ չեն խոչընդոտի ընթացող բանակցութիւններին, եւ յոյս ունենք, որ այդ բանակցութիւնները կը շարունակուեն նորմալ ընթանալ»,- ասել է Փերինան: Գերտէրութեան ներկայացուցչի վստահութիւնն իհարկէ նրան թոյլ է տալիս Հայաստանի նման խեղճ ու կրակ երկրում արտայայտուել աւելի ազատ, քան թոյլ է տալիս դիւանագիտութիւնը, բայց դժուար թէ Փերինայի յայտարարութիւնը միտում չունենար: Մարդը յստակ ասել է, որ Ղարաբաղի խնդրի կարգաւորման հարցը ԱՄՆ-ի համար առաջնային է եւ որ այն կարեւոր է Հայաստանի եւ Ատրպէյճանի կայունութեան համար: Ի՞նչ է սա նշանակում. որ ղարաբաղցիները թող անեն ինչ ուզում են, բայց Ղարաբաղի հարցը պէտք է լուծուի Հայաստան-Ատրպէյճան քննարկման արդիւնքում, եւ որ ԱՄՆ-ն անպայման կը միջամտի այդ հարցի լուծման գործում: Բնական է, որ ԱՄՆ-ն այն կը լուծի իր զանգակատանը յարմար եղանակով, եւ ԱՄՆ դիւանագէտները դա չեն էլ թաքցնում: «Մենք անցեալում այս ուղղութեամբ շատ ակտիվօրէն աշխատել ենք, եւ համոզուած եղէք, որ Միացեալ Նահանգները շարունակելու է աջակցել խնդրի կարգաւորման հարցում նաեւ ապագայում»,-բացատրել է Փերինան: ԼՂ հարցի ցանկացած շրջադարձի համար մենք, ի հարկէ, երախտապարտ պիտի լինենք Ռոբերդ Քոչարեանին, միջազգային բոլոր կառոյցներում, քաղաքական բոլոր հարթութիւններում եւ դիւանագիտական ցանկացած չփման ասպարէզում տանուլ տալու եւ Ատրպէյճանին ամուր հիմքեր ապահովելու համար: Մեր իշխանութիւնն, իհարկէ, հմտութիւն եւ առաւել եւս հաւես չունի դիւանագէտների ասածներին հետեւելու եւ համապատասխան եզրակացութիւններ անելու համար: Չէ՞ որ կան շատ աւելի կարեւոր բաներ՝ հսկել ու վերահսկել Հայաստանի տնտեսութիւնը, որ յանկարծ մենաշնորհային «քաղաքականութիւնը» ձեռքից չգնա, չսեփականացուած հանքեր, մայթեր, ծառ ու ծաղիկ չմնայ, ժողովուրդը յագենայ ժամանակակից տեխնոլոգիայով ու յանկարծ այնպէս չլինի, որ առանց բջջայինի մարդ պատահի փողոցներում եւ այլն, եւ այլն: Իսկ ԼՂ հա՞րցը... կը կարգաւորուի էլի, ինքն իրեն, կամ էս կողմ, կամ էն կողմ:*

**Գ. ԱՌՈՒՍՏԱՄԵԱՆ**
**«ՏԱՐԵԳԻՐ»**

# ԶԱՐՄԱՆՔ

*Աշխարհում բոլորից շատ ժողովրդական արժէքներից խօսում է մեր հայրենակիցների մի մասի «երազանքի երկիր» **ԱՄԵՐԻԿԱՆ**, որը «փիս խասեաթ» ունի նաեւ «ժողովրդավարութիւն տարածել» զէնքի միջոցով այն երկրներում, որոնց ժողովուրդը կառավարման այդ ձեւը համարում է խորթ: Եւ զարմանալին այն է, որ «սուպերժողովրդավար» ԱՄՆ-ն, փոխանակ ողջունի ԼՂՀ-ում կայացած ժողովրդավարական ընտրութիւնները, պեքարտուղարութեան պաշտօնեաների շուրթերով յայտարարում է. «Միացեալ Նահանգները յարգում է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, չի ճանաչում «ԼՂՀ-ն» եւ այնտեղ անցկացուող «ընտրութիւնները»...»: Զարմանալի է, որ ԱՄՆ-ն այդքան բացասաբար է վերաբերւում այն հանգամանքին, որ Արցախում իշխանութիւնը փոխուել է ժողովրդավարական ընտրութիւնների, այլ ոչ թէ ժառանգական փոխանցմամբ, զինեալ յեղաշրջման կամ բռնակալական նշանակման միջոցով:*

*Ի դէպ, մամուլի մասին: Մեր գործընկեր Արման Բաբաջանեանը, ում իշխանութիւնները «աւանակի յամառութեամբ» չեն ուզում ազատ արձակել, Յուլիսի 20-ից ճարահատեալ սկսել է անժամկէտ հացադուլ: Սակայն ամենազարմանալին ոչ թէ այն է, որ «պատիժը կրելուց պայմանական վաղաժամկէտ ազատելու հարցերով» անկախ յորջորջուող յանձնաժողովը մեր գործընկերոջը թողեց բանտում, այլ յանձնաժողովի անդամ, փաստաբան **ՆԻԿՈԼԱՅ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԻ** դիպուկ գնահատականը. «Կարծում եմ այս դէպքում գործել է իշխանութիւնների դրսեւորած քաղաքական կամքը, քանի որ, եթէ մի բան տրամաբանուած չէ, պատճառաբանուած չէ, ապա կարելի է եզրակացնել, որ այո, քաղաքական կամքի դրսեւորում է եւ որեւէ տրամաբանութեան չի ենթարկւում»: Նրա խօսքից պարզ է դառնում, որ Արման Բաբաջանեանի ազատ արձակմանը դէմ են քուէարկել հենց ուժային կառոյցների ներկայացուցիչները, այսինքն՝ յանձնաժողովը կոչւում է անկախ, սակայն զարմանալիօրէն ամբողջովին կատարում է ուսադիր կրողների կամքը, եւ այդտեղ վաղուց ժամանակն է արմատական բարեփոխում անցկացնել, քանզի յաճախ մէկ երրորդով ազատ են արձակւում իսկական կրկնայանցագործները, իսկ առաջին անգամ դատուած եւ դրական բնութագիր ունեցող մարդիկ յաճախ շարունակում են փտել բանտերում:*

*Ասուած զարմանալի երեւոյթը երեւում է եւ Նուբարաշէն համայնքում տեղի ունեցած դաժան սպանութեան քննութեան գործի ընթացքից: Այդտեղ մի քանի հոգի ծեծելով սպանել են 55-ամեայ Գէորգ Գաբրիելեանին, եւ կասկածեալներից մէկից՝ Բարձրաշէնի դաշնակցական գիւղապետ **ԿԱՄՕ ԲԱԲԱՆԵԱՆԻՑ**, ընդամէնը ստորագրութիւն են վերցրել բնակավայրից չբացակայելու: Զարմանալի է՝ յաճախ իրաւապահները մտածում են, թէ կալանաւորե՞ն արդեօք, ասենք, վիրաւորանք հասցնելու մեղադրանքի տակ գտնուող անձանց, թէ՞ սահմանափակուեն ստորագրութիւն վերցնելով, իսկ տուեալ դէպքում զարմանալիօրէն սահմանափակւում են ստորագրութեամբ այն դէպքում, երբ խօսքը սպանութեան մասին է: Միգուցէ տուեալ դէպքում գիւղապետի «ինդուլգենցիան» այն է, որ նա ՀՅԴ անդա՞մ է...*

*Մեզ հերթական անգամ զարմացրեց Գիւմրու քաղաքապետ **ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆԸ**: Թէեւ ամբողջ աշխարհը գիտի, որ իրեն ստիպել են յանցագործ որդուն յանձնել իրաւապահներին, նա զարմանալիօրէն պնդում է, որ որդու յանձնուելուց առաջ որդու երեսը ո՛չ տեսել է, ո՛չ էլ հետը զրուցել է: Բայց էլ աւելի զարմանալի է, որ նա պնդում է. «Վերին ատեանի շատ են սիրում իմ տղային Գիւմրիում: Շատերից շատ»: Զարմանալի է, նա գիւմրեցիներին գժի տե՞ղ է դնում: Չէ՞ որ միայն խելապակասը կարող է սիրել այն անձնաւորութեանը, որը իր քաղաքի կենտրոնում կէսժամանոց փոխհրաձգութիւն է կազմակերպում: Սակայն, կարելի ասել, որ տուեալ պարագայում գիւմրեցիները թերեւս էժան են պրծել, քանզի իրենց ընդամէնը գժի տեղ են դրել, մինչդեռ ամբողջ ժողովրդին, արդէն քանի տարի է, էշի տեղ են դնում:*

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԼԱՋԵԱՆ**
**«ԻՍԿԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ»**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

## ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ» ՀԱՐՑԸ ՆՈՐԻ՞Ց ԿԸ ԼՍՈՒԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: «Ղարաբաղում իշխանութիւնները ընտրւում են միայն ու միայն ընտրութիւնների միջոցով»,- լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀԿ անդամ, խմբակցութեան քարտուղար Սամուէլ Նիկոյեանը: Նա շտապեց շնորհաւորել Լեռնային Ղարաբաղի նորընտիր նախագահ Բակօ Սահակեանին եւ յոյս յայտնեց, որ նրա պաշտօնավարման ընթացքում Ղարաբաղը կը պայքարի անկախութեան եւ երկրի զարգացման համար:*

*Սամուէլ Նիկոյեանի խօսքերով՝ ընտրութիւնների անցկացումը կարեւոր քաղաքական իրադարձութիւն է, որը մի քայլ է դէպի անկախացում: Եւ Ղարաբաղում իւրաքանչիւր քաղաքացի գիտակցում է, որ ընտրութեանը մասնակցելն իր քաղաքացիական պարտքն է:*

*Առաջիկայ նախագահական ընտրութիւններից առաջ ընտրական օրէնսգրքում մասնակի փոփոխութիւններ կը լինեն եւ հնարաւոր է, որ այդ փոփոխութիւնները քննարկուեն Սեպտեմբերին ԱԺ-ի կայանալիք առաջին նիստերից մէկի ժամանակ: Ըստ Սամուէլ Նիկոյեանի, ընտրական օրէնսգրքում պէտք է վերանայուի հիմնադրամի եւ հիմնադրամի ծախսման մեխանիզմի Թափանցիկութեանը, վերահսկողութեանը վերաբերող կէտերը: Եւ, ըստ նրա, պէտք է հանուի Թեկնածուի քաղաքացիական նախաձեռնութեամբ առաջադրուելու կարգը. Թեկնածուն պէտք է ինքնառաջադրուի:*

*Սամուէլ Նիկոյեանը կարծում է, որ նախագահի ընտրութիւններում կը լինեն բաւարար Թուով Թեկնածուներ Թէ ընդդիմութիւնից, Թէ արտախորհրդարանական ուժերից, եւ Թէ «նորայայտ Թեկնածուներից» եւ կը ծաւալուի լուրջ մրցապայքար: Իսկ իշխանութիւնը իմիտացիոն Թեկնածու չի ներկայացնելու, քանի որ դրա անհրաժեշտութիւնը չկայ:*

*Լեւոն Տէր-Պետրոսեանի վերադարձի կապակցութեամբ նկատեց.«Շրջապատը ուզում է, որ նա գայ, բայց մենք չգիտենք, նա ուզո՞ւմ է, Թէ ոչ: Ոչ յայտարարութիւն է անում, ոչ խօսում»:*

*Նախագահական ընտութիւններում, նրա կարծիքով, լինելու է անձերի եւ կատարած գործերի պայքար:*

*Իսկ «Հեռուստատեսութեան եւ ռադիոյի մասին» օրէնքում փոփոխութիւնների նախագիծը Սեպտեմբերին կրկին խորհրդարան բերելու հնարաւորութեան մասին «Ա1+»-ի հարցին նա դժուարացաւ պատասխանել եւ ասաց, որ դա կառավարութեան եւ նախագծի հեղինակի որոշելիք հարցն է, եւ եԹէ որոշուի բերել, ապա անպայման կը քննարկեն:*

## ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆԵԱՆԸ ԴԱԴԱՐԵՑՐԵԼ Է ՀԱՑԱԴՈՒԼԸ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Ժամանակ - Երեւան» Թերթի գլխաւոր խմբագիր Արման Բաբաջանեանը ժամանակաւորապէս դադարեցրել է անցած շաբաԹավերջին յայտարարած հացադուլը՝ ի նշան բողոքի Դատապարտեալների պայմանական-վաղաժամկէտ ազատման յանձնաժողովի որոշման, որով մերժուել էր «Նուբարաշէն» քրէակատարողական հիմնարկի ադմինիստրացիայի միջնորդութիւնը Բաբաջանեանին պայմանական-վաղաժամկէտ ազատելու մասին:*

*Հացադուլը Բաբաջանեանը դադարեցրել է պայմանով, որ իրեն բացատրեն մերժման պատճառը:*

*Նա հանդիպում է ունեցել արդարադատութեան նախարարութեան քրէակատարողական վարչութեան պետ Աշոտ Մարտիրոսեանի, մի քանի իրաւապաշտպանների հետ, որոնք նրանք յորդորել են դադարեցնել հացադուլը:*

*Բաբաջանեանը յոյս է յայտնել, որ իրեն պայմանական-վաղաժամկէտ ազատելու պահանջը, այնուամենայնիւ, կը կատարուի:*

*«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, Թէ ինչ ակնկալիքներ ունի Բաբաջանեանը, նրա փաստաբան Նիկոլայ Բաղդասարեանը պատասխանեց, Թէ Բաբաջանեանը «հաւատում է, որ այս երկրում դեռ հնարաւոր է օրինական ճանապարհով որեւէ հարց լուծել»:*

## «ՄԻԱՅՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՅԱՂԹԵԼ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ»

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Առաջիկայ ՀՀ նախագահական ընտրութիւններին ՀՀՇ վարչութեան կողմից Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջադրման մասին շրջանառուող լուրերի վերաբերեալ ՀՀՇ վարչութեան անդամ Արամ Մանուկեանը նշեց, որ պէտք է մի քիչ էլ սպասել, Թէեւ փորձեց, այնուամենայնիւ, «շատ կարճ եւ դիւանագիտօրէն» պատասխանել. «Մենք Լեւոն Տէր-Պետրոսեանի անձը չէ, որ ուզում ենք առաջադրել, այլ առաջադրել այն ծրագիրը, այն տեսակէտները, մօտեցումները, որոնք մեզ համար հարազատ են եւ Հայաստանի զարգացման համար գտնում ենք ճիշդ»:*

*Այդ առաջադրումը, ըստ նրա, կը լինի ոչ միայն ՀՀՇ-ինը, այլեւ «կը լինեն քաղաքական այլ ուժեր, որոնք նոյն կերպ են մտածում»: «Թիւ մէկ խնդիրն այսպէս է դրուած՝ ո՞վ կարող է յաղԹել այս իշխանութիւններին»,- աւելացրեց Արամ Մանուկեանը: Իսկ այդ հարցի պատասխանն աւելի կոնկրետ, ըստ Մանուկեանի, կը լինի մի փոքր ուշ:*

## «ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՆԱԽԱԳԱՀԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ»

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: «Օրինաց երկիր» կուսակցութեան անդամ Յովհաննէս Մարգարեանը կարծում է, որ նախագահական ընտրութիւններին եւ իշխանութիւնը եւ ընդդիմութիւնը պէտք է հանդէս գան միասնական Թեկնածուով: «Ցաւօք, արդէն երկու դաշտերում էլ խօսւում է տարբեր Թեկնածուների մասին,- այսօր «Փաստարկ» ակումբում ասաց նա,- այնպէս որ ընդդիմութիւնը չի կարողանայ հանդէս գալ մէկ Թեկնածուով. կը լինեն 2-3 Թեկնածուներ: Սա չարիքի փոքրագոյնն է»:*

*ՕԵԿ-ի անդամը յայտարարեց, որ իրենք ողջունում են ցանկացած համագործակցութիւն ընդդիմադիր ճամբարում, սակայն նշեց, որ. «Այսօր կան քաղաքական գործիչներ, որոնք անգամ 1% ձայն հաւաքելու շանս չունեն, բայց խօսում են իրենց Թեկնածութեան մասին»: Նման քաղաքական գործիչներին Պրն Մարգարեանը համարում է յաւակնոտ: Նա առանձնացրեց մի շարք չափորոշիչներ, որոնց, պէտք է համապատասխանի նախագահի Թեկնածուն. «Այդ չափորոշիչներն են տարիքը, կրԹութիւնը,հեղինակութիւնը, աշխատանքի արդիւնքը, ժողովրդի կողմից նրա ընկալումն ու ներդրումը քաղաքականութեան մէջ»:*

## ՆՈՐԱՅԱՅՏԵՐԸ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԵՆ ՀԻՆ ԱՍՏՂԵՐԻՆ



Նունէ Եսայեան



Շուշան Պետրոսեան

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: Նորայայտ երգիչները խանգարում են աստղերին: Նման կարծիք յայտնեցին հանրայայտ երգչուհիներ Նունէ Եսայեանը եւ Շուշան Պետրոսեանը. «Նրանք հիմա զբաղեցնում են ստուդիաները, գործիքաւորողներին՝ փչացնելով նրանց ճաշակը նոյնպէս: Մեր մէկ ամսուայ գործը մենք չենք կարողանում աւարտել նոյնիսկ մէկ տարում, իսկ այդ երգիչները արդիւնքում աղբ են տարածում»,- այսօր հրաւիրած ասուլիսում ասաց Նունէ Եսայեանը: Նա այսօրուայ երիտասարդութեանը բնորոշեց իբրեւ ինքնահաւան, լկտի:*

*Շուշան Պետրոսեանը կարծիք չյայտնեց միայն այն պատճառով, որ համոզուած է՝ նրանք դա վերագրելու են չարակամութեան:*

*Ընտրութիւնների քարոզարշաւին երգիչների մասնակցութիւնը, ըստ Նունէ Եսայեանի, միակ հնարաւորութիւնն է գումար վաստակելու. «Իշխանութիւնները գալիս-գնում են, սակայն խոստումները չեն իրականանում»:*

*Իսկ Շուշան Պետրոսեանն տեղեկացրեց, որ Հանրապետական կուսակցութեան համար աշխատել է միայն այն պատճառով, որ այդ կուսակցութիւնն է զօրամասեր այցերի ժամանակ իրեն աջակցում համերգների կազմակերպման հարցում:*

*Երգչուհիները հերքեցին պտտուող այն լուրերը, որ իրար չեն սիրում: Նունէ Եսայեանն ասաց, որ չկայ որեւէ կոլեգա, որին ինքը չսիրի: Պետրոսեանն էլ յաւելեց, որ ցանկացած ընտանիքում տարաձայնութիւններ լինում են:*

*Առաջիկայում կայանալիք համերգի մասին երգչուհիներն ասացին, որ այն լինելու է կենդանի հնչողութեամբ եւ որեւէ դեկորացիա չի լինելու: Յուլիսի 27-ին եւ 28-ին տեղի ունենալիք համերգը Նունէ Եսայեանի համար մինչեւ մայրանալը կը լինի վերջինը:*

*Թէեւ Շուշան Պետրոսեանը մայրանալու է Նունէ Եսայեանից մէկ ամիս անց, բայց չի որոշել մինչ այդ համերգներ կ'ունենայ, Թէ՝ ոչ:*

## ՇՕՇԱՓԵԼԻ ԱՆԿՈՒՄ Է ԱՊՐԵԼ ԱԿՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՍԿԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏԸ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Ոսկեգործութեան եւ ակնագործութեան ոլորտը Հայաստանում լուրջ խնդիրներ ունի ԱՄՆ-ի տոլարի արժեզրկման եւ ազգային դրամի արժեւորման հետեւանքով: Ամբողջութեամբ արտահանումից կախուած այս ոլորտում, ինչպէս յայտարարեց առեւտրի եւ արդիւնաբերութեան նախարարութեան ոսկեգործութեան եւ ակնագործութեան բաժնի պետ Գագիկ Մկրտչեանը, անկումը ընթացիկ տարուայ առաջին կիսամեակում կազմել է գրեԹէ 50 տոկոս:*

*Մկրտչեանը երկուշաբԹի օրը լրագրողներին վստահեցրեց, այդուհանդերձ, որ ոլորտում արձանագրուած անկման պատճառը միայն տոլարի արժեզրկումը չէ. ի նպաստ ակնագործութեան չեն աշխատում նաեւ համաշխարհային միտումները:*

*Նա չհերքեց, որ ոսկեգործութեան եւ ակնագործութեան ոլորտն այսօր «լրջագոյն խնդիրներ ունի». գործատուները ստիպուած են կրճատել աշխատավարձերը, հարկադիր արձակուրդ ուղարկել աշխատակիցներին:*

*Հրապարակելով առաջին վեց ամսուայ ցուցանիշները՝ Գագիկ Մկրտչեանը ցուցանիշները բերեց դրամով, քանի որ տոլարային համարժէքով գրեԹէ ոչինչ չի փոխուել, իսկ դրամով տարբերութիւնը նախորդ տարիների համեմատ «ակնյայտ եւ մտահոգիչ» է:*

*«Առաջին վեց ամիսներին արտադրուել է (եւ գրեԹէ նոյնքան արտահանուել) 25 միլիարդ դրամի արտադրանք», - ասաց նա: - «Պէտք է նշել, որ անցեալ տարուայ նոյն ժամանակահատուածի նոյն ցուցանիշի համեմատ մենք ունենք գրեԹէ 50 տոկոսի չափով անկում՝ 48 տոկոս անկում է կազմել»:*

## ԼՈՒՐԵՐ

# ԱԺԿ-Ն ՀՆԱՐԱՒՈՐ Է ՉՄԱՍՆԱԿՑԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: ԱԺԿ-ն չի պատրաստւում վերամիաւորուել ԱԺԴ-ի հետ եւ երկուսով մտնել ԱԺՄ՝ այսպիսով վերականգնելով այն, ինչ ժամանակին պառակտուեց: Իսկ այդ մասին լուրերը Շաւարշ Քոչարեանը կարդացել է մամուլում: Որեւէ բանակցութիւն, կամ որեւէ խօսակցութիւն այդ մասին իր հետ չի եղել: Ինչ վերաբերում է առաջիկա նախագահական ընտրութիւններին, ապա դրանցով, ըստ ԱԺԿ նախագահ Շաւարշ Քոչարեանի, իշխանութեան հարց չի լուծւում:*



ԱԺԿ նախագահ Շաւարշ Քոչարեան

*«Իշխանութեան հարցը լուծուել է խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ»,-սահմանադրական փոփոխութիւնների էութիւնը յիշեցնելով ասում է Քոչարեանը: Ուղղակի, եթէ նախագահ ընտրուեց քաղաքական մեծամասնութեան ներկայացուցիչը, ապա նա կ'ամրապնդի մեծամասնութեան իշխանութիւնը, իսկ եթէ կ'ընտրուի ընդդիմութեան ներկայացուցիչն, ուրեմն նա կը լինի ոչ մեծ լծակներով հակակշիռ քաղաքական մեծամասնութեանը: Բայց թէ ներքին, թէ արտաքին քաղաքականութեան հարցում որոշիչ է լինելու քաղաքական մեծամասնութեան կարծիքը՝ «քանի որ սահմանադրական փոփոխութիւններով մենք այլեւս կիսանախագահական երկիր ենք»:*

*Ընդդիմութիւնը նախագահական ընտրութիւններից առաջ պէտք է վերլուծի խորհրդարանական ընտրութիւնների սխալները, եթէ դա չանի, ըստ նրա, չի կարող յաջողութիւն ունենալ նախագահականում: Իսկ եթէ խորքային փոփոխութիւններ ընդդիմութիւնը չիրականացնի իր գործելաոճում, այլ իմիտացիոն բնոյթի, ապա յաջողութիւն ակնկալելու իմաստ Շաւարշ Քոչարեանը չի տեսնում: Ի դէպ, եթէ իմիտացիոն լինեն ընդդիմադիր կուսակցութիւնների միասնական գործելու բանակցութիւններն ու գործընթացները, ԱԺԿ-ն հնարաւոր է չմասնակցի ընտրութիւններին:*

# «ԺՈԶԷ ԲԱՐՈԶՈՆ ԵՒ ԽԱՎԻԷՐ ՍՈԼԱՆԱՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԼՐՏԵՍՆԵՐ ԵՆ»

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: ԼՂՀ նախագահի ընտրութիւններում բոլոր միջազգային դիտորդական խմբերն իրենց յայտարարութիւններում արձանագրեցին, որ ընտրութիւններն ընթացել են ազատ, արդար եւ թափանցիկ, սակայն դիտորդները աւելի հետաքրքիր էին առանձին զրոյցներում:*

*«ԼՂՀ -ն անկախ պետութիւն է, եւ դա փաստ է: ԵՄ-ն ու ԱՄՆ-ն դա պէտք է ընդունեն իբրեւ փաստ», -ԼՂՀ նախագահի ընտրութիւններից յետոյ «Ա1+»-ին յայտնեց Սերբիայի «Բելգրադի կրիմինոլոգիայի եւ սոցիոլոգիական ուսումնասիրութիւնների ինստիտուտի» տնօրէն Միրոսլաւ Իվանովիչը:*

*Նա վստահ է, որ Եւրոպական հանրութիւնը եւ ԱՄՆ-ն ԼՂՀ-ի անկախութիւնը չեն ընդունում՝ ելնելով իրենց անձնական շահերից. «Նրանք տնտեսական ակնկալիքներ ունեն Ատրպէյճանից, եւ դա սխալ, անընդունելի եւ էգոիստական մօտեցում է ԼՂՀ-ի նկատմամբ»:*

*Պարոն Իվանովիչի կարծիքով, ԼՂՀ-ի նկատմամբ Ատրպէյճանի, ԱՄՆ-ի եւ Եւրոպայի քաղաքականութիւնը դեռ երկար կարող են մնալ անփոփոխ, սակայն դա չպէտք է հետաքրքրի ԼՂՀ-ին. «ԼՂՀ հայ ժողովուրդը պէտք է ապրի իր կեանքով: Որքան էլ Ատրպէյճանն ու միջազգային կառոյցները շարունակեն իրենց քաղաքականութիւնը, միեւնոյն է՝ ուշ թէ շուտ նրանք պարտաւոր են հաշուի նստել Ղարաբաղի որոշումների հետ: Եւ որքան շուտ Ատրպէյճանը ճանաչի ԼՂՀ-ի անկախութիւնը, դրանից կը շահի առաջին հերթին ինքը: ԼՂՀ-ն այսպէս, թէ այնպէս կառուցում է իր ժողովրդավար ապագան»:*

*Ընտրութիւնների ընթացքում Միրոսլաւ Իվանովիչը շրջել է ԼՂՀ տարբեր շրջաններում եւ գիւղերում ու վստահեցրեց, որ որեւէ խախտում չի արձանագրել. «Եթէ խախտում լինէր, հնարաւոր չէր այն չնկատել: Չկայ որեւէ հիմք, որ միջազգային հանրութիւնը չընդունի ԼՂՀ նախագահի ընտրութիւնների արդիւնքները: Իսկ չընդունելու դէպքում միջազգային հանրութիւնն ընդամէնը հաստատում է, որ ԼՂՀ-ի նկատմամբ օբիեկտիւ չէ»:*

*Ինչ վերաբերում է ԼՂ-ի յարակից տարածքների վերաբերեալ ԵԽԽՎ գլխաւոր քարտուղար Թերի Դեւիսի տեսակէտին, ապա Սերբիայի «Բելգրադի կրիմինոլոգիայի եւ սոցիոլոգիական ուսումնասիրութիւնների ինստիտուտի» տնօրէն Միրոսլաւ Իվանովիչն ասաց. «Նա խորապէս սխալւում է: Նրան պէտք է ԼՂՀ հրաւիրել, որպէսզի տեսնի, թէ ովքեր եւ ինչպէս են այստեղ ապրում: Թերի Դեւիսն ընդամէնը աչք է փակում իրականութեան վրայ»:*

*ԼՂՀ նախագահի ընտրութիւնները ժողովրդավարութեան չափանիշներին համապատասխան գնահատեց նաեւ Ֆրանսիացի փորձագէտ Իվ Բաթայը: Միջազգային հանրութեան եւ յատկապէս ԵՄ-ի կողմից ԼՂՀ ընտրութիւնների արդիւնքները չճանաչելը նա բացարձակ չի կարեւորում եւ գտնում է. «Իրականում ԵՄ գոյութիւն չունի, այն ընդամէնը տնտեսական միութիւն է: ԵՄ-ն ներկայացնող Ժոզէ Մանուէլ Բարոզոն ընդամէնը ամերիկեան լրտես է: Ամերիկեան լրտես է նաեւ Խավիեր Սոլանան: Նրանք չեն ներկայացնում Եւրոպան»:*

*Իվ Բաթայը գտնում է, որ ԼՂ հիմնախնդրին նոյնիսկ մակերասային ծանօթները գիտեն, որ ԼՂ-ն հայկական հող է, եւ այսօր հարցը քննարկելու կարիք չկայ. «Դա շատ լաւ գիտի նաեւ Ատրպէյճանը եւ ընդամէնը պէտք է իր մէջ ուժ գտնի եւ դա խոստովանի: Ես իրատեսական չեմ համարում նաեւ այն տեսակէտը, թէ ատրպէյճանցիները կարող են վերադառնալ Ղարաբաղ: Այդ մասին յայտարարողներն էլ վստահ են, որ ԼՂ-ն հայկական տարածք է, սակայն այդ մասին բացայայտ չեն խօսում՝ ելնելով իրենց երկրների շահերից»:*

*ԼՂՀ-ն անկախ եւ կայացած պետութիւն է համարում նաեւ աշխարհաքաղաքական փորձագէտ սլովակ Սաշա Պոպովիչը:*

# ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԲՌՆՈՒԹԵԱՄԲ ՏԱՊԱԼԵԼՈՒ ԿՈՉ




Վարդան Մալխասեան

*Յուլիսի 24-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատեանի դատարանում շարունակուեց «Հայ կամաւորականների համախմբում« հասարակական նախաձեռնութեան անդամներ Վարդան Մալխասեանի, Ժիրայր Սեֆիլեանի եւ նրանց ընկեր Վահան Արոյեանի նկատմամբ պետական կարգը բռնութեամբ տապալելու կոչերի եւ ապօրինի զէնք պահելու մեղադրանքներով յարուցուած քրէական գործի դատաքննութիւնը: Վարդան Մալխասեանը հարկ համարեց լրացուցիչ ցուցմունք տալ եւ որոշակիօրէն պարզաբանել իր ելոյթը, որն էլ համարուել է պետական կարգը բռնութեամբ տապալելու կոչ:*

*Սահմանադրութեան 27-րդ յօդուածը իրաւունք է տալիս կարծիք արտայայտել, եւ ոչ ոք իրաւունք չունի անձին ստիպել փոխելու իր կարծիքը, յայտարարեց Վարդան Մալխասեանը: ՀՀ քրէական օրէնսգրքի մեջ վերագրուող 301-րդ յօդուածը հակասում է ՀՀ սահմանադրութեանը, անորոշ է եւ անյստակ եւ «այդ անորոշութիւնը իշխանութիւններին հնարաւորութիւն է տալիս կամայականօրէն եւ ընտրովի կիրառել այս յօդուածը ընդդիմադիր եւ անցանկալի գործիչների նկատմամբ քաղաքական հաշուեյարդար կիրառելու համար»:*

*Վարդան Մալխասեանը դահլիճին դիմեց. «դուխներդ չգցէք, պէտք է յաղթենք»: Ցուցմունք տալիս էլ նա աւելի շատ նայում էր դահլիճին, քան դատարանին: Վարդան Մալխասեանը յայտարարեց, որ իր ելոյթը եղել է քննադատութիւն, խիստ քննադատութիւն, բայց ոչ երբեք պետական կարգը բռնութեամբ տապալելու կոչ: Ես ասել եմ, որ նրանք, ովքեր ազատամարտիկների արիւնով ձեռք բերածը վաճառում են, ովքեր խեղճացրել են հային, քողարկուած թշնամի են, ներքին թշնամի, յանցագործ աշխարհի թափթփուկներ. «եթէ դատարանը կ'որոշի, որ դրանք ՀՀ իշխանութիւններն են, ես կ'ընդունեմ իմ մեղքը», յայտարարեց Վարդան Մալխասեանը: Իր ելոյթում նա ասել է, որ «Սերժն ու Քոչարեանը հայրենավաճառութեամբ են զբաղուած: Սա բոլորն են ասում, մենակ ես չեմ ասում»: Վարդան Մալխասեանը չի հրաժարւում իր ելոյթից, բայց յայտարարում է, որ պետական կարգը բռնութեամբ տապալելու կոչ չի արել եւ առաջարկում է ելոյթը լեզուաբանական փորձաքննութեան ենթարկել:*

*«Զարմանում եմ, թէ իշխանութիւններն ինչու են վախենում քննադատական խօսքից», յայտարարեց Վարդան Մալխասեանը եւ հենց դատարանի դահլիճում քննադատեց իշխանութիւններին: Օրերս Ռոբերտ Քոչարեանը յայտարարել է, թէ դատարանների նկատմամբ անվստահութիւն կայ: Դա նրանից է, որ «Հայաստանում կան իրենց օրէնքից եւ արդարադատութիւնից վեր դասող անձիք, ովքեր չեն թողնում, որ դատաւորը ճիշդ մտածի, արդարադատութիւն իրականացնի, եւ սրա հիմքերը գալիս են նախագահից»:*

*Ըստ Վարդան Մալխասեանի՝ իրենց նկատմամբ որպէս խափանման միջոց կալանք կիրառելը դատարանին դրել է մի վիճակի մէջ, երբ դատարանը ստիպուած է լինելու առաւելագոյն պատժաչափ սահմանել: «Մենք ազատազրկուած ենք արդէն 7.5-8 ամիս: Եթէ դատարանը որոշի մեզ պատժել ոչ նուազագոյն պատժով՝ տուգանքով, ոչ առաւելագոյն պատժով՝ 3 տարի ազատազրկում, այլ միջին՝ երեք ամիս ազատազրկում, ո՞վ է պատասխան տալու նրա համար, որ 5 ամիս աւել ենք ազատազրկուած», հարցրեց Վարդան Մալխասեանը: Հենց սա էլ դատարանին ստիպելու է առաւելագոյն՝ 3 տարի ազատազրկում որոշել, կարծում է Վարդան Մալխասեանը: «Միեւնոյն է, հայը պայքարելու է», ամփոփեց Վարդան Մալխասեանը:*

*Դատաքննութեան ժամանակ նրանց ընկեր «Հայ կամաւորականների համախմբում» հասարակական նախաձեռնութեան անդամ Արմէն Աղայեանը յայտարարեց, որ «Հայ կամաւորականների համախմբում» հասարակական նախաձեռնութեան հաւաքում եղել են ելոյթներ, բայց պետական կարգը բռնի տապալելու կոչեր չեն եղել: Հաւաքն ինքը չի ունեցել այնպիսի նպատակներ, որն առնչութիւն ունենային Վարդան Մալխասեանին, Ժիրայր Սեֆիլեանին առաջադրուած մեղադրանքների հետ, հաւաքը գաղտնի չի եղել, ներկայ են եղել ինչպէս «Հայ կամաւորականների համախմբման» հետ կապ չունեցող գործիչներ, այնպէս էլ՝ լրագրողներ:*

*Ընդհանրապէս Արմէն Աղայեանը պահանջում է «մեզ խելագարների ամբոխ չհամարել, Նաիրի Յունանեանի մակարդակի»: «Հայ կամաւորականների համախմբման» մէջ համախմբուածները գիտեն, որ «պետական մեքենայի դէմ զէնքով գնալը ինքնասպանութեան պէս բան է» եւ իշխանափոխութեան իրենց անսահման ցանկութիւնը պատրաստւում են իրականանցնել բացառապէս քաղաքական միջոցներով եւ ազգային, գաղափարական, կազմակերպուած եւ կարգապահ ուժ ձեւաւորելով:*

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ՀԵՏ «ԴԺՈՒԱՐ ԹԷ ԹՈՇԱԿԱՌՈՒ ԴԱՌՆԱՄ»

*Ընտրական գործընթացների առումով առաւել ժողովրդավարական համբաւ ունեցող Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը հերթական՝ 4-րդ անգամ ընտրեց իր նախագահին: Մինչ նախագահի թեկնածուների առաջադրումը՝ տեւական ժամանակ քաղաքական-լրագրողական շրջանակներում քննարկւում էր ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասեանի՝ երրորդ անգամ առաջադրուելու հարցը: Իսկ երբ յայտնի դարձաւ, որ Արկադի Ղուկասեանը չի առաջադրուելու, միանգամից գրեթէ բոլորին յուզող հարցը դարձաւ հետեւեալը՝ արդեօք Արկադի Ղուկասեանը կը դառնայ՞ ամենաերիտասարդ թոշակառուն, կամ արդեօք նա որեւէ պաշտօն կը զբաղեցնի՞ Երեւանում: Մինչ **ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ** հետ զրոյցն ամբողջութեամբ ներկայացնելը՝ նշենք, որ IWPR կազմակերպութեան նախաձեռնած ծրագրի շրջանակներում մի խումբ լրագրողներ՝ ինչպէս Երեւանից, այնպէս էլ Վրաստանից, Աբխազիայից, Հիւսիսային Օսիայից, մասնակցեցին թէ՛ նախընտրական, թէ՛ ընտրական գործընթացներին:*

*Տեղեկացնենք, որ ԼՂՀ արդէն նախկին նախագահի հետ մեր զրոյցը տեղի է ունեցել ընտրութիւնների նախօրէին՝ Յուլիսի 18-ին, ԼՂՀ նախագահի նստավայրում:*

- Պարոն Ղուկասեան, Ձեր գնահատմամբ՝ ինչպիսի՞ն էր Արցախում նախընտրական իրավիճակը:

*- Ընդհանուր առմամբ, եթէ չհաշուենք որոշ մանր թերութիւնները, որոնք եղել են, իրավիճակը, կարծում եմ, բարեյաջող էր:*

- Պարոն Ղուկասեան, Դուք պատրաստւո՞ւմ էք ընտրութիւններից յետոյ դառնալ ամենաերիտասարդ թոշակառուն:

*- Այդ հարցերի շուրջ բազմիցս արտայայտուել եմ: Այսօր կոնկրետ ծրագիր չունեմ: Դժուար թէ թոշակառու դառնամ, քանի որ դեռ շատ կայ 90 տարեկան դառնալուն: Յուսով եմ՝ դեռ ուժ ու հնարաւորութիւն ունեմ ծառայելու եւ օգտակար լինելու հայրենիքիս:*

*Ինչ վերաբերում է՝ ե՞րբ դա կը լինի, պարզ է, որ ինչ-որ ժամանակ թոշակառու լինելու եմ, չեմ կարող ասել: Այսօր կոնկրետ պաշտօնի վերաբերեալ ես պլաններ չունեմ, ինչ կը լինի վաղը՝ չգիտեմ:*

- Քաղաքականութի՞ւն, թէ՞ բիզնես. ո՞րն է առաւել իրատեսական Ձեզ համար:

*- Բիզնէսը կատեգորիկ բացառւում է: Ինքս բիզնեսի համար, կարծես թէ, ծեր եմ: Եթէ մինչեւ հիմա բիզնէսով չեմ զբաղուել, նշանակում է՝ դժուար թէ ինձանից լաւ գործարար դուրս գայ, իսկ վատ գործարար լինել չեմ ցանկանում:*

- Այսինքն՝ կը շարունակէ՞ք քաղաքական կարիերան:

*- Չգիտեմ, դա անպայման կարիերա՞ կը կոչուի, թէ՞ ոչ: Գուցէ պարզապէս քաղաքական կամ հասարակական գործունէութիւն լինի: Էլի եմ կրկնում՝ կոնկրետ պատասխան այդ հարցին այսօր տալ չեմ կարող: Սակայն սկզբունքօրէն կարելի է ծառայել հայրենիքին՝ առանց որեւէ պաշտօն զբաղեցնելու: Իմիջիայլոց, դա էլ շատ հետաքրքիր է: Ամենեւին էլ պարտադիր չէ մարդկանց ցոյց տալ, որ հայրենիքին օգտակար լինելու համար անպայման պէտք է պաշտօն ունենաս: Ես կարծում եմ, որ դա պարտադիր չէ:*

- Նախագահի հիմնական թեկնածուներից երկուսը պաշտօններ են զբաղեցրել կառավարութիւնում, ընտրութիւններից յետոյ հնարաւո՞ր է պարտուած թեկնածուն զրկուի իր այսօրուայ պաշտօնից:

*- Այդ հարցն, ինչպէս գիտէք, արդէն ես չեմ լուծելու: Չեմ կարող ասել՝ պարտուածը կարո՞ղ է ինչ-որ բան կորցնել, թէ՞ ոչ, բայց ամէն դէպքում կարող եմ ասել, որ եթէ մարդը մասնակցում է ընտրութիւններին իր դիրքորոշմամբ, եւ եթէ իշխանութիւնների գործողութիւնները չեն համապատասխանում այդ դիրքորոշմանը, այդ թեկնածուն ինքը պէտք է որոշի՝ շարունակի՞ աշխատանքը գործող իշխանութեան հետ, թէ՞ ոչ: Բայց ինձ համար բացարձակապէս նշանակութիւն չունի՝ ով կ՚ընտրուի: Կարծում եմ՝ նախագահի համար գլխաւոր խնդիրը ազատ եւ արդար ընտրութիւնների ապահովումն է: Ես բացարձակ վստահ եմ, որ այդպէս էլ լինելու է, քանի որ դա մեզ մօտ արդէն աւանդոյթ է դարձել: Ես կարծում եմ, որ մենք յետխորհրդային երկրների համեմատ՝ ամենալաւ ընտրութիւններն ենք անցկացնում, եւ, որպէս կանոն, ընտրութիւնները Ղարաբաղում թշնամանք չեն ծնում: Հասկանալի է, որ ընտրութիւններին չափազանց շատ է պոպուլիզմը, շատ է ինքնագովասանքը, շատ է, ցաւօք, սեւ PR-ը, եւ այս տեխնոլոգիաները ներթափանցեցին նաեւ Ղարաբաղ, ինչը ինձ չափազանց վշտացնում է, սակայն այդ տեխնոլոգիաների մի մասը հենց ընտրութիւնների համար է նախատեսուած:*



- Աւանդոյթ է ձեւաւորուել, որ Ղարաբաղում պաշտօնից հեռացած մարդիկ լքում են Ղարաբաղը, գալիս են Երեւան կամ Բելառուս:

*- Չէի ասի, թէ աւանդոյթ է դարձել, քանի որ խօսքը եզակի՝ մէկ-երկու դէպքի մասին է: Իսկ նման աւանդոյթ մեզ մօտ չկայ: Առաջին հերթին՝ բացառութիւնները հաստատում են կանոնները: Երկրորդ՝ խօսքը Բելառուսի մասին է, աւարտուել են պատգամաւորական լիազօրութիւնները, բայց այդ մարդը կրկին առաջադրուել է, եւ ոչ ոք չի կարող հաստատել, որ նա չէր կարող պատգամաւոր ընտրուել:*

*Ես կատեգորիկ յայտարարել եմ, որ մնալու եմ Ղարաբաղում:*

- Ձեզ համար զարմանալի չէ՞ր, որ ԼՂՀ նախագահի միասնական թեկնածուին պաշտպանում են ինչպէս իշխանական, այնպէս էլ ընդդիմադիր ուժերը:

*- Իհարկէ, զարմանալի է, սակայն ինձ անձամբ դա ուրախացնում է, քանի որ կարծում եմ՝ եզակի հնարաւորութիւն կայ ժողովրդին միաւորելու: Դա չի նշանակում, որ Ղարաբաղում ընդդիմութիւն չկայ. ընդդիմութիւն միշտ էլ կայ, դժգոհներ միշտ էլ կան, նեղացածներ միշտ էլ կան եւ կը լինեն: Դժբախտաբար, մեզ մօտ «ընդդիմութիւն» եւ «նեղացածներ» հասկացութիւնները դեռեւս բաւական համարժէք են: Ցաւօք, մեզ մօտ դեռեւս ընդդիմադիր պայքարի, ընդդիմադիր գործունէութեան մշակոյթը չկայ: Որպէս կանոն, մեզ մօտ բոլոր կամ գրեթէ բոլոր ընդդիմադիրները նեղացածներն են:*

*Չեմ կարծում, որ եթէ առաջադրուած լինէր մէկ այլ թեկնածու, բոլոր այդ կուսակցութիւնները կը միաւորուէին: Կարծում եմ, որ դա հետեւանք է նրա, որ հենց Բակօ Սահակեանը այն ֆիգուրն էր, որի շուրջը համախմբուեցին: Լա՞ւ էր, թէ՞ վատ՝ կեանքը ցոյց կը տայ: Ես կարծում եմ, որ դրանում ոչ մի վատ բան չկայ: Վերջին հաշուով, եթէ մարդիկ, կուսակցութիւնները ազատ են մտածելու այնպէս, ինչպէս անհրաժեշտ են կարծում, ինչո՞ւ պէտք է մենք մտածենք, որ դա վատ է, ոչ ոք իրենց չի ստիպել միաւորուել Բակօ Սահակեանի շուրջ: Ոչ մի տրամաբանութիւն չկայ, որ Ղուկասեանն է իրենց ստիպել միաւորուել: Եթէ Ղուկասեանը կարողանար կամ ցանկանար դա անել, կ՚անէր այն ժամանակ, երբ ինքն էր նախագահ: Այնպէս որ, կարծում եմ, ոչ մի դժբախտութիւն այդ հարցում չկայ:*

- Պարոն Ղուկասեան, որքա՞ն է իրական պատերազմի վերսկսման վտանգը:

*- Չեմ կարծում, որ այսօր պատերազմական գործողութիւնների վերսկսման համար օբիեկտիւ՝ քաղաքական, տնտեսական, բարոյական նախադրեալներ կան: Սակայն, իհարկէ, բացարձակ ճշգրտութեամբ բացառել այդ գործողութիւնների վերսկսումը, հնարաւոր չէ: Մի կողմից՝ մենք գործ ունենք բաւական անկանխատեսելի երկրի հետ, որի խօսքերն ու գործողութիւնները ոչ միշտ են համարժէք լինում, եւ իրենք այդպիսի յայտարարութիւններ անելով՝ դառնում են իրենց իսկ յայտարարութիւնների գերին: Բայց ցանկանում եմ ընդգծել, որ օբիեկտիւ նախադրեալներ, անգամ՝ ռազմական, չեմ տեսնում, քանի որ պատերազմը հաւանաբար սկսում են այն ժամանակ, երբ վստահ են*

*Շար.ը էջ 19*



## ՔԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԶԱՒԷՆ ԽԱՆՃԵԱՆԻ «ԱՅՍ ՏՈՒՆԸ ՔՈՒ՞ԿԴ Է ԹԷ ԻՄՍ» ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԻՆ

*ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ*

Գաղութային մեր կեանքէն ներս պարբերաբար կը հանդիպինք դրական զարգացումներու, որոնք ինքնագոհութեան եւ հաւանութեան արտայայտութիւններ կրնան նկատուիլ: Այս խորհրդածութիւնը ունեցանք Զաւէն Խանճեանի նոր լոյս տեսած գրքի հրապարակային ներկայացման առիթով, գիրք որ ունէր հետաքրքրական խորագիր մը.

«Այս Տունը քո՞ւկդ է թէ իմս»: Այս խորագիրը ինքնին շատ բան կը նշանակէ, քանի որ կը վերաբերի տան մը, որ ներկայիս կը գտնուի աշխարհագրական շրջանի մը մէջ ուր, ժամանակին, հայեր կը բնակէին, եւ ներկայիս, Ցեղասպանութեան արդիւնք, Թուրքեր եւ քիւրտեր կը բնակին:



Հեղինակ Զաւէն Խանճեան եւ տիկինը Սոնա ելոյթի պահուն

Այս տան նոր բնակիչը, Թուրք մը, նախկին տիրոջ, Զաւէն Խանճեանի ընտանիքին, կ'ուղղէ այս հարցումը.

«Այս տունը քո՞ւկդ է թէ իմս»:

Պէտք է կարդալ Զաւէն Խանճեանի գիրքը իրազեկ դառնալու համար այս հետաքրքրական երկխօսութեան, հին եւ նոր տէրերու միջեւ, երկխօսութիւն մը արդարեւ, որ իր մէջ կը պարունակէ երկու ժողովուրդներու, հայ եւ Թուրք, որոնք դարերու ընթացքին շփում ունեցած են իրարու հետ:

Ինչ կը վերաբերի մուտքին ակնարկուած գաղութային դրական երեւոյթին, այն էր որ Խանճեանի գրքին հրապարակային ներկայացումը միատեղ կազմակերպութեամբ եղած էր գաղութէն ներս գտնուող չորս պատասխանատու մշակութային միութեանց.

Թէքէեան Մշակութային Միութիւնը.

Համազգային Կրթական եւ Մշակութային Ընկերակցութիւն.

Նոր Սերունդ Մշակութային Միութիւն.

Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբ.

Ձեռնարկը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 12 Յուլիս 2007, երեկոյեան ժամը 8:00ին Կլէնտէյլի կեդրոնական գրադարանի սրահէն ներս, որ ժամանակէ մը ի վեր դարձած է հայ համայնքի գրական երեկոներու ժամադրավայրը:

Պէտք է արձանագրել որ այս չորս միութիւններով կազմակերպուած երեկոն չէր կարողացած հաւաքել սրահը լեցնելու չափ գրասէրներ, եւ ասոր ալ պատճառը հաւանաբար Զաւէն Խանճեանի նոյն թեմայով նախապէս ունեցած ելոյթներն էին, դասախօսական ձեւի տակ, եւ մարդիկ լեցուցած էին սրահները: Այս չորս մշակութային միութեանց համատեղ կազմակերպումը պէտք է վերագրել գրքի հեղինակ Զաւէն Խանճեանի հանդէպ գաղութէն ներս գոյութիւն ունեցող յարգանքին եւ համակրանքին, եւ իր ընդհանուր ազգային-հասարակական կեանքէն ներս ունեցած գովելի գործունէութեան:

Ամէն պարագայի, երեկոն ինքնին լաւ կազմակերպուած եւ խիստ հետաքրքրական բովանդակութիւն մը ունէր, եւ իր ընդհանրութեան մէջ, կարելի եղաւ քննարկուող գրքին, էութեան թափանցումը, զոր կարելի է նկարագրել իբրեւ գեղուն, յուզիչ եւ հայրենասիրական զգացումներով արտայայտուող պատմում մը, հեղինակին եւ իր տիկնոջ ուխտագնացութեան դէպի կորսուած հայրենիք:

Երեկոյի բացման խօսքը եւ հանդիսավարութիւնը ըրաւ Վաչէ Սեմերճեան, գաղութիս ծանօթ մտաւորական մը, որուն բեմական իւրաքանչիւր ելոյթը յատկանշուած կ'ըլլայ լրջութեամբ եւ խղճամիտ պատրաստութեամբ: Առաջին

Շար.ը էջ 18

## ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Երբ կը ծնիս միջավայրի մը մէջ ու կեանքիդ տարիները կ'ապրիս հոն, մտածելակերպդ զարգացման որոշ ուղի մը կը բոլորէ: Բայց երբ պարագաները կը ստիպեն քեզի որ լքես ծննդավայրդ ու կեանքիդ տարիները ապրիս տարբեր երկիրներու մէջ, ապա վստահաբար մտածելակերպդ զարգացման տարբեր ուղի մը պիտի բոլորէ: Ու թափառական վիճակդ քեզի փնտռել կու տայ հիմք մը, Աւետարանի պատգամած ապառաժեայ հիմքին նման, որու վրայ կ'ուզես խարսխել գոյութիւնդ եւ էութիւնդ, լաւագոյնս արժեւորելու համար կեանքդ: Սուրիա, Լիբանան, Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Քուէյթ, Սէուտական Արաբիա եւ վերջապէս Ա.Մ.Ն.երու մէջ իր տարիները ապրած Զաւէն Խանճեանի համար այդ հիմքը Մասիս սարն է: «Մասիսը, որ վեհապանծօրէն կը կանգնի մեր դէմ, իսկականին մէջ մեր սրտերուն մէջ, մեր հոգիներուն մէջ է, ամուր փաթթուած մեզի, այս կողմը, միւս կողմը, եւ կամ ուր որ ալ գտնուինք երկրագունդին վրայ: Մասիսը մեր պատմութիւնն է, մեր պատկանելիութիւնն է: Մեր յոյսն ու ապաւէնն է: Մասիսը մենք ենք եւ մենք՝ Մասիսը: Մեր էութեան եւ գոյութեան, անցեալի, ներկայի եւ ապագայի ամենախտացած խորհրդանիշը ոչ խաչն է եւ ոչ ալ լեզուն, այլ ամէն հայու հոգիի մէջ անջնջելի կնիքով մը դրոշմուած Մասիս սարն է»:

Այդ հիմքի հետ վերահաղորդուելու կանչն էր, որ մղեց Զաւէն Խանճեանն ու իր ուղեկիցները կատարելու, այս ուխտագնացութիւնը: Եւ ոչ միայն կանչը, այլ նաեւ պարտքը, եւ այդ պարտքի գիտակցութիւնը: Մեր արագընթաց կենցաղը հակամէտ է մեր ուշադրութիւնը շեղեցնելու մեր կիզակէտէն: Ուստի ո՞ւր որ ալ գտնուինք, ի՞նչ վիճակի մէջ ալ ըլլանք, մեր պարտքը պէտք է ըլլայ այդ հիմքի հետ, մեր անցեալի ու արմատներու հետ հաստատուն կապի պահպանումը: Զաւէն Խանճեանի համար, իր հօրենական հարազատ տան կանգուն մնացած ըլլալը, catalyst-ի դեր կատարած է այդ կապի ամուր պահպանման համար: Իսկ ի՞նչ ըսել հայութեան այն ջախջախիչ մեծամասնութեան համար, որոնց պապենական տուները փլատակ դարձած են: Ահա այդ բոլորին համար Մասիսը տուն պէտք է դառնայ ու անջնջելի կնիքով մը դրոշմուի անոնց հոգիներուն, սրտերուն եւ գիտակցութեանց մէջ:

Բայց նկատելով որ մարդ միայն անցեալով չի կրնար ապրիլ, ուստի այդ անցեալը պէտք է նաեւ խթան հանդիսանայ մեր սլացքին, դէպի ապագան: Մեր գոյութեան եւ էութեան խորհրդանիշ Մասիսը գերուած է: Այս վիճակը կը պատկերացնէ մեր անցեալն ու ներկան: Բայց կը սպասէ ազատագրութեան: Ուր պէտք է ըլլայ այն ապագան, որուն պարտաւոր ենք ձգտիլ: Կորուստի ահաւորութիւնը նոյնաչափ պէտք է խթանէ նաեւ վերատիրացման պահանջատիրութիւնը: Պահանջատիրութիւն, որ առաջին հերթին կը սկսի մնացորդացի պահպանումով ու հզօրացումով: Վանի ազատագրման լաւագոյն գրաւականը, հզօր Երեւանն է: Կ'եզրափակեմ Զաւէն Խանճեանի բառերով, «ուխտագնացութեան անխախտելի եզրակացութիւնս, անդրադարձս եւ համոզումս է՝ ամրապնդել Հայրենիքի պետականութիւնը իր ամրակուռ բանակով, հզօր տնտեսութեամբ, անբասիր եւ անշահախնդիր ղեկավարութեամբ եւ հայրենի հողին վրայ ապրող ժողովուրդի երջանկութեամբ: Հարկաւոր է եւ անհրաժեշտ՝ բարձր պահել Հայաստանի, Արցախի եւ հայրենաբնակ մեր ժողովուրդի պատիւն ու արժանապատուութիւնը: Բայց մանաւանդ հարկաւոր է եւ անհրաժեշտ բարձր պահել՝ մեր, իմ եւ քու, պատիւն ու արժանապատուութիւնը: Որովհետեւ վա՜յ մեզի, եւ ճակատագրականօրէն աններելի՝ պատմական Հայաստանի ահաւոր կորուստի փորձառութենէ ետք՝ մէկ թիզ հող իսկ կորսնցնել, հայրենի մէկ գիւղ իսկ պարպել եւ հայրենաբնակ մէկ հատիկ հայ իսկ պերջանկացնել:



ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԳԻՆԵՃՕՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՅՈՎԱՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ՀԷՄՇԻՆ» ՀԱՏՈՐԻՆ

*ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ*

*Ուրբաթ, Յունիս 28, 2007 երեկոյեան ժամը 8:00ին, Burbankի Առաջնորդարանի «Գալայճեան» սրահին մէջ, «Գինեձօն»ի հանդիսութեամբ մը Յովան Սիմոնեան հրաշալիօրէն ներկայացնուեց իր հեղինակած «Հէմշին» հատորը՝ կազմակերպուած Պոլսահայ Միութեան Կեդրոնական Վարժարանի Սանուց Յանձնախումբի, ինչպէս նաեւ Հարաւային Գալիֆորնիոյ Հայագիտական Ուսմանց Հիմնարկի կողմէ, 130 հոգիի հասնող գրասէր հասարակութեան մը ներկայութեամբ:*

*Բարի գալուստի խօսքը կատարեց Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի ատենապետ եւ Կեդրոնական Վարժարանի Սանուց Յանձնախումբի երկրորդ ատենապետ՝ Տքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան, որ շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր, Պոլսահայ Միութեան Մայր Վարչութեան, Կեդրոնական Սանուց Յանձնախումբի ատենապետ՝ Յովսէփ Թոքաթին, Հարաւային Գալիֆորնիոյ Հայագիտական Ուսմանց Հիմնարկի պատասխանատուներուն, ինչպէս նաեւ հետազօտիչ, մտաւորական, ընկեր Յովան Սիմոնեանին: Ապա ներկայացուց օրուայ հանդիսավար՝ բանասէր Յովսէփ Նալպանտեանի հակիրճ կենսագրականը ու հրաւիրեց զայն վարելու հանդիսութիւնը: Տիար Նալպանտեան մշակուած եւ ուժական ձայնով, բեմական ներկայութեան ոճով ու կորովով, շնորհակալութիւն յայտնեց որ իրեն վստահուեցաւ այդ օրուայ ձեռնարկին հանդիսավարութիւնը, յայտնելով թէ որակաւոր գիրքերը կը լուսաւորեն մեր հոգին, կը բարձրացնեն ու կը զօրացնեն մարդը, անոր մէջ յառաջացնելով լաւագոյն ձգտումներ: Սոյն հատորը հարուստ տուեալներով, գիտական լուրջ աշխատանք մըն է որուն մասին ծանօթութիւններ պիտի տայ Պոլսահայ Միութեան Կեդրոնական Վարժարանի Սանուց Յանձնախումբի ատենապետ՝ Տիար Յովսէփ Թոքաթ: Ապա ան ներկայացուց Տիար Թոքաթի հակիրճ կենսագրականը եւ հրաւիրեց զայն ներկայացնելու «Հէմշին» հատորը:*

*Տիար Թոքաթ իր ուրախութիւնը յայտնեց ըսելով թէ «Այսօր հաւաքուած ենք այստեղ վայելելու սոյն հատորին գինեձօնի հանդիսութիւնը»: Ընթերցեց հեղինակին կենսագրականը, թէ ինչպէս ան հետաքրքրուած էր իսլամացած Համշէնահայերով որոնց մասին որոշած էր գրել, ան 1998ին ճամբորդած է «Համշէն» մօտէն ծանօթանալու անոնց մասին որոնք դիտումնաւոր կերպով ձերբազատուած էին իրենց ինքնութենէն եւ մոռացութեան ենթարկելով իրենց սովորութիւններն ու մշակոյթը: Սիմոնեան նրբանկատ աշխատանք մը տարած է հինգ տարի եւ ամիս մը տեւող ժամանակամիջոցի մը վրայ 417 էջերու պարունակութեամբ մեր դիմաց պարզելով «Համշէն» առասպելի պատմութեան պատկերը»: Տիար Թոքաթ յաջորդաբար ներկայացուց Համշէնահայերու ծագման մասին երբ 791ին, 12,000 հայեր ձգեցին Օշական գիւղը փախչելու արաբներուն «ճնշիչ եւ կոշտ» սահմանադրութենէն, Սեւ Ծովու Պոնտական մասին շրջակայքը, որ կը զանազանուի իր աշխարհագրութեամբ եւ ցեղային ու լեզուական այլազանութեամբ երկրին միւս մնացեալ մասէն: Այսօր, անոնք բաժնուած են երեք շրջաններու, «արեւելեան» մասը Հոբա շրջանին մէջ, «Միջին» մասը Էրզրումի շրջանին մէջ եւ «արեւմտեան» մասը Տրապիզոնի շրջանին մէջ: Տիար Թոքաթ խօսեցաւ նաեւ անոնց իսլամացման եւ պատճառներուն մասին, 19րդ դարու երկրորդ կիսուն անոնց իրավիճակին, կենցաղին, տարածուած վայրերու, բարբառին եւ երաժշտութեան մասին:*

*Ապա բեմ հրաւիրուեցաւ Տիար Վաչէ Մանկրեանը որ դաշնակի վրայ նուագեց Առնօ Պապաճանեանէն կտոր մը, ամբողջատիրութեամբ եւ յաջողութեամբ կալանելով գեղանուագը:*

*Հանդիսավարը յաջորդաբար բեմ հրաւիրեց Հարաւային Գալիֆորնիոյ Հայագիտական Ուսմանց Հիմնարկի տնօրէն, քաղաքական գիտութիւններու մասնագէտ, դասախօս, հասարակական եւ մշակութային գործիչ՝ Փրօֆ. Տէքմէճեանը որ անգլերէն լեզուով ներկայացուց հատորը: Ան ըսաւ. «Իսկապէս որ առանձնաշնորհեալ կը զգամ կատարելու այս գիշերուայ հիացում առթող այս հատորին ներկայացումը»: Մի քանի խօսք ըսաւ հեղինակին եւ այս հոյակապ ծրագրին դժուար ծագման մասին: Հեղինակը կու գայ մտաւորական սերունդէ: Ան ուսումնասիրած է «Հէմշին»ը որ եղաւ իր մտքի լման գրաւումն ու անձկութիւնը: 11 գրողներ միասնաբար իրար մօտ գալով գրեցին գիրք մը 15 համարներով: Սոյն խումբը կազմուած էր երկու Թուրքերէ, երեք հայերէ, երկու գերմանացիներէ, ամերիկացիէ մը, անգլիացիէ մը, հունգարացիէ մը եւ ֆրանսացիէ մը: Գիրքը կը բաղկանար 417 էջերէ: Վերոյիշեալ 15 համարներէն երեքը՝ գրած է Սիմոնեան, համար մը՝ 15րդ դարու սկզբնաւորութեան տարիներուն մասին, ուրիշ մը՝ հայերու մահմետականացման մասին որ շատ ցաւալի էր, նաեւ Հէմշինահայերու փոխ-յարաբերութեանց մասին այլ հայերու հետ: «Վերջապէս, ըսաւ Փրօֆ. Տէքմէճեան, ինծի համար իբրեւ քաղաքական գիտնական «Հէմշին»ը կը խորհրդանշէ քաղաքական տկարութեան համեմատութիւններ: Իտէալներու փոխանորդ չկայ որուն համար կրնանք ենթադրել թէ ուժը կը պաշտպանէ ինքզինք: Այս դասը, դաս մըն է Հայաստանի Հանրապետութեան համար: Մինչ այդ՝ մեր շնորհաւորութիւնները հեղինակին»:*



*Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեան, հասարակական եւ մշակութային գործիչներ կը կատարեն «Գինեձօն»ի արարողութիւնը*

*Շար.ը էջ 19*

DON'T MISS your chance to introduce your businesses or products to thousands of Armenians and non-Armenians in a single day!

RESERVE your BOOTH today for the most anticipated event of the year!

THE ARMENIAN INDEPENDENCE DAY

Festival

on Sunday, September 23, 2007 at the Verdugo Park in Glendale

Ձեր արուեստը, ձեռնակերտը եւ արհեստը հազարաւոր մարդկանց ներկայացնելու լաւագոյն առիթը ՄԻ ՓԱԽՑՆԷՔ

ԱՊԱՀՈՎԵՑԷՔ ձեր ԿՐՊԱԿՆԵՐԸ այսօր իսկ, տարուան ամենէն շատ ժողովրդականութիւն վայելող ձեռնարկին

*Վայրը հաւանութեան արժանացաւ եւ միասնաբար լծուեցին կէսօրուայ ճաշի պատրաստութեան, այդուհանդերձ որ կէսօրուայ ժամից մի երկու ժամ անցել էր:*

*Ուտելիքների համեստ սփռոց փռուեց, անշուշտ առանց ոգելից խմիչքի, Անդրանիկն արգելել էր իրենց հետ խմիչք վերցնել: - Սար բարձրացողի համար խմիչքը վտանգաւոր է. ասել էր նա: Նստատեղից Թեհրան քաղաքի ուրւականն էր երեւում, պզտիկացած՝ տուներ տուփիկների պէս շարուած խիտ կանաչութեամբ ու Թեհրանի վրայ երեւացող ամպերի կտորտանքով:*

*-Ախպրտիք ջա՛ն, կարծեմ՝ ժամանակն է մեր երկրորդ նիստի, Անդրանիկն յարեց.*

*-Ինչպէս իմանում էք, մեր ժողովուրդը գիւղերը լքել Թեհրան են գաղթել, շատեր գտնուում են անո-*

*Շար.ը էջ 17*


**ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ**

**Վ Ի Ճ Ա Կ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն**
**Ի նպաստ**
**Նոր Հաճնոյ Մեծն Մուրատ դպրոցին**

Մեծ Պարգեւ՝ **2008 Lexus ES 350**
Ա. Պարգեւ՝ **Երկու Երթ ու Դարձ Տոմս Հայաստան**
Բ. Պարգեւ՝ **Laptop Համակարգիչ**
Գ. Պարգեւ՝ **42" Plasma TV**

**Վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ**
**Կիրակի, Մարտ 16, 2008, Կ.Ե. ժամը 8:00ին**
**Verdugo Hills Country Club**
**400 West Glenoaks Blvd., Glendale, CA 91202**

**Նոր Հաճըն Քաղաքի 50-ամեակի տօնակատարութեան առիթով**

**Նուէր՝ $100**
**Տոմսերը ստանալու համար հեռաձայնել՝**
**(626) 351-0695, (626) 577-7234, (818) 243-7029**

# ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՑԻ ՄԱՍԻՆ

*ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԵԱՆ*
*ԲԱՆ.ԳԻՏ. ԹԵԿՆԱԾՈՒ*

«Հացը սուրբ է», «Էս սուրբ հացը վկայ», «Հացն ու գինին՝ Տէր կենդանին» արտայայտութիւններն ունեն կրօնական հիմք:

Տէրունական աղօթքում ասում ենք. «Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր»: Հացի սուրբ լինելու խորհուրդը հաստատւում է նաեւ վերջին ընթրիքի ժամանակ՝ սուրբ հաղորդութեամբ, երբ Յիսուս Քրիստոս վերցնում է հացը, օրհնում եւ տալիս աշակերտներին, ասելով՝ «Առէ՛ք, կերա՛յք, այս է մարմինն իմ» (Մատթ. 26. 28): Ապա մատուցւում է սուրբ հաղորդութեան գինին՝ որպէս տէրունական արեան խորհուրդ (Մատթ. 26.27-28):

Հացի երկնատուր լինելու մասին հանդիպում ենք նաեւ Հին ուխտում: «Եւ կերիցեն զմիսն ի գիշերիս յայսմիկ. խորովեալ հրով եւ բաղարջ ընդ եղեգի կերիցեն» (Ելից, 12.8): «Զեւթն օր բաղարջ ուտիցէք. յառաջնըմէ իսկ օրէ անտի անհետ առնիջիք զխմոր ի տանց ձերոց» (Ելից, 12.15):

Հացը աստուածային պարգեւ է, որի մասին հայոց Խորհրդատետր-Պատարագամատոյցում գրուած է. «Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի»:

Ընդհանրական եկեղեցին, ինչպէս եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, սուրբ հացը համարում է Քրիստոսի մարմնի խորհրդանշանը: Ագաթանգեղոսն այն կոչում է «եկեղեցու օրհնեալ հաց», որը սուրբ պատարագի խորհրդակատարութեամբ փոխակերպւում է Յիսուս Քրիստոսի մարմնի:

Սուրբ նկանակը եւ դրա տարատեսակները գրական արեւելահայերէնում եւ արմտահայերէնում ունեն տարբեր բառանուանումներ՝ նշխար, մաս, սուրբ հաղորդութեան հաց, բաղարջ, բոկեղ եւ այլն: Հայերէնի բարբառներում կան նշուած բառերին հոմանիշ բառեր եւ հնչիւնական տարբերակներ:

ա) Նշխար. պահլաւերէն բառ է. նշանակում է կտորտանք, փշուր:

Սուրբ նշխարը սբ. պատարագի ժամանակ կիրառուող սբ. հաղորդութեան նիւթերից (հաց ու գինի) մէկն է: Այն խաչելութեան կամ տնօրինական այլ խորհրդի պատկերով փոքր, բոլորաձեւ, նուրբ, անթթխմոր հաց է, որ երկու երեսին ունի մակագրութիւն՝ Յիսուս Քրիստոս: Ցընթացս սբ. պատարագի սբ. հաղորդութեան հացը Սուրբ Հոգու ներգործուն զօրութեամբ այլակերպւում է կենաց Բանին՝ Յիսուսի մարմնին, որ ակնածանքով ճաշակւում է հաղորդուողի կողմից: Սբ. նշխարի աստուածային փոխակերպման մասին հաւաստում են նաեւ մեր սուրբ հայրերը՝ Խոսրով Անձեւացին, Ներսէս Լամբրոնացին, Գրիգոր Տաթեւացին եւ այլք:

6-10 սմ տրամագիծ եւ 5-7մմ բարձրութիւն ունեցող նշխարը թխում են թիթեղի վրայ՝ մինչեւ վարդագունելը:

Առաքելական կանոնների համաձայն՝ սուրբ պատարագի հացը պատրաստւում է նոյն օրը եւ թարմ վիճակում բարձրացւում է Սուրբ սեղան, որը հաւատացեալներին է բաժանւում պատարագիչ քահանայի ձեռքով: Տնօրհնէքի, հոգեհանգստի կամ քահանայական դասին կարելի է տալ նախապէս պատրաստուած նշխար: Տաղավար տօներին, երբ հաղորդուողների մեծ բազմութիւն է լինում, պատրաստւում են առաւել մեծ նշխարներ: Հայերէնի բարբառների մեծ մասին բնորոշ են նշխար բառի հնչիւնական տարբերակները, օրինակ,

Ըրշխարf, Ախալցխա, Առտիալ, Գորիս, Խարբերդ, Կռզեն, Կարին, Կարճեւան, Համշեն, Մեղրի, Մուշ, Շամախի, Ջուղա, Սեբաստիա, Սալմաստ, Թիֆլիս, Ղարաբաղ, Նըշխարք, Մոկս, Շատախ, Վան,

Ըրխշարf, Բուլանըխ, Ալաշկերտ, Երեւան, Ուրմիա, Ալիճադրակ, Բիթլիս,

Ըրխշարf, Մանդան,

Ըրխշա"f, Արտամետ,

Ըրշխարկ, Գելիեզուզան, Սադդուն, Գոմք,

Ըրխշար, Էգնախոջա, Բադնոս,

Ըախշար, Մալաթիա,

Ըրշխար, Բուրդուր, Սուեդիա, Աչաջուր, Գանձա, Արմտլու,

Ըիխշարf, Նոր Նախիջեւան,

Ըիշխարf, Երզնկա, Պոլիս, Ռոդոսթո, Նիկոմեդիա,

Ըիշխարf, Մարաղա,

Ըիշխար*, Ասլանբեգ,

Ըրխշարկ, Արծափ, Գեաբոլներ, Կարս, Խութ,

Ըրխշա"րf, Աղաւնատուն, Խոյ,

Ըրշխա"րf, Տիգրանակերտ,

Ըրշխօրf, Ագուլիս, Տանակերտ, Բէյլան,

Ըրշղարf, Ախալքալաք, Բեժանօ,

Ըիշխուր, Սուեդիա,

Ըիշխօր, Մարաշ,

Ըէշխօյ, Հաջըն, Զէյթուն, Ը էշխոր, Ըէշխօյf, Ըէշխօրf, Զէյթուն եւ այլն:

Նշխար բառի փոխարէն Համշէնի բարբառի ճանիկ, Սամսոն, Օրմօնքոյ բնակավայրերում գործածելի են ջաշագ, Բուլանըխում՝ բանձրահեմ եւ նըշօշ, Մարաղայում՝ մանանա, Սասունում՝ պարծրարիգ հոմանիշները: Ղարաբաղի բարբառի մանկական բառապաշարին բնորոշ է ժամի տատա արտայայտութիւնը: Շատ սակաւաթիւ բարբառային տարածքներում, օրինակ, Ոզիմում, Ղափանի Ներքին եւ Վերին Խոտանանում նշխար բառի բարբառային զուգաբանութիւն գրանցուած չէ:

Նշխար բառն ունի նաեւ «սրբոց մասունքներ» իմաստը:

բ) Մաս. Յունարէն antidoron (anti-հակա, փոխարէն, doron-նուէր, պարգեւ) նշանակում է նուէրի փոխարէն, այսինքն՝ սուրբ հաղորդութեան նշխարի փոխարէն: Սուրբ սեղանի վրայ բարձրաստիճան հոգեւորականի կողմից օրհնուած նշխարի փշուրները կոչւում են մաս: Ովքեր սուրբ պատարագին չեն հաղորդւում, սուրբ սեղանից անմասն չմնալու համար հաղորդութեան փոխարէն մաս են ստանում: Մասը բաժանելիս քահանան ասում է. «Սա եղիցի մաս եւ բաժին քեզ», այսինքն՝ մասնակից լինես սուրբ հաղորդութեան հացին եւ նրա շնորհին:

Հայերէնի բարբառներում մաս հասկացութիւնը որպէս սուրբ հաղորդութիւն է ընկալւում Բուլանըխում, Կռզենում, Ղարաբաղում, Ղարադաղում, Սուչաւայում, իսկ որպէս մաս է ընկալւում Այնթապում, Ադանայում, Պոլսում եւ այլուր: Մասը Վանում կոչւում են պանցրաց, իսկ մասնըուելն ունի հաղորդուել իմաստը: Պոլսի եւ Մալաթիայի բարբառներում մաս բառով կազմւում է երդման արտայայտութիւն՝ Խաչ որ, մաս որ ես չէի:

Գորիսի խօսուածքում անմասն կամ ամաս(ն)ը նշանակում է «առանց հաղորդութիւն ստանալու»:

գ) Բաղարջ եւ բոկեղ. այս հացատեսակները եւս ունեն կրօնաեկեղեցական հիմք եւ անեկ ու անթթխմոր են: Իւղով կամ ռուպով թխուած կլոր կամ մանեկաձեւ փափուկ հացի այս տեսակները թխում են յատկապէս կաղանդին եւ պահում են մինչեւ Տեառնընդառաջ՝ այդ օրը բաժանելու համար: Եթէ նշխար բառը հիմնականում հանդիպում է հնչիւնական տարբերակներով, ապա բաղարջը ի յայտ է բերում բազմաթիւ բառային հոմանիշներ:

Հայերէնի բարբառներին բնորոշ են բաղարջ բառի հնչիւնական տարբերակներ եւ հոմանիշներ: Օրինակ,

բ'աղարջ, Մուշ,

բ'աղաջ, Կոդակ, Լօռի, Կարին,

բ'աղաճ, Հաղպատ,

*Շար.ը էջ 19*

*The Quality and Safe Choice…*

**AGBU HIGH SCHOOL -PASADENA**

**2007-2008 School Year**

***New Student Enrollment***

**Grades: 9-12**

*Experienced and Caring Faculty*
*College Preparatory Academic Program*
*Honors & AP Level Instruction*

For further information, campus tour and a meeting with the administration, please call for an appointment

**(626) 794 – 0363 ❖ (818) 612-1079**

2495 E. Mountain Street (corner of Altadena Street), Pasadena, CA 91104

# 17-19ՐԴ ԴԱՐԵՐՈՒ ՀԱՅ ՔԱՂՔԵՆԻՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ՝ ՉԵԼԵՊԻՆԵՐ, ԽՈՃԱՆԵՐ, ԱՄԻՐԱՆԵՐ ԵՒ ԷՖԷՆՏԻՆԵՐ

*Շարունակուած էջ 13–էն*

*գայիրլեանը, Պաղտասար Ջերագեանը եւ ուրիշներ: «Ռումէլի» ընկերութեան գլխաւորներն էին՝ Յարութիւն Ուզունեանը, Մկրտիչ Ճէզայիրլեանը, Պաղտասար Ջերագեանը եւ ուրիշներ: «Ռումէլի» ընկերութեան գլխաւորներն էին՝ Ճանիկ եւ Մագսուտ ամիրաները, Աբրահամ Ալլահվէրտին, Յովհաննէս Թնկըրեանը եւ ուրիշներ:*

*«Անատոլու» ընկերութիւնը իր գործակատարներուն եւ հարիւրաւոր պաշտօնեաներուն միջոցով կը հաւաքէր տէրութեան արեւելեան, այսինքն Պոլսէն դէպի արեւելք՝ Անատոլու երկարող տարածութեան հարկերը, իսկ «Ռումէլի» ընկերութիւնը կը հաւաքէր Պոլսէն դէպի արեւմուտք երկարող շրջանին հարկերը: Ամիրաները օգտուելով այն հանգամանքէն, թէ մինչեւ 1856 թուական Պոլսոյ մէջ կանոնաւոր դրամատուներ չկային, իրենք կը կատարէին այդ գործառնութիւնները: Անոնք դրամական փոխատուութիւններ կ՚ընէին վաճառականներու, առեւտրական ընկերութեանց, պետական գրասենեակներու եւ նոյնիսկ սուլթաններու՝ 20–25 առ հարիւր տոկոս գանձելով: Տատեան գերդաստանին գլխաւորը՝ Առաքել Տատ ամիրան, 1795 թուականին պալատ կանչուեցաւ եւ նշանակուեցաւ արքունի վառօդարանի, այսինքն՝ զինագործարանի ղեկավար: Այնուհետեւ, 75 տարի Տատեան ամիրայական տան զաւակները ժառանգաբար ղեկավարեցին Թուրքիոյ զինագործարանները, առաւել՝ թուղթի արտադրութեան եւ բանակի հանդերձաւորման գործերը:*

*19րդ դարու առաջին կէսին պոլսահայութեան տիտաններէն էր նաեւ Յարութիւն ամիրա Պէզճեանը, «Գազազ Արթին» անուանեալ, 1771-1834: Յարութիւն ամիրա հայ քաղքենիութեան այն մեծագոյն դէմքերէն էր, որ իր նիւթական միջոցները ի սպաս դրաւ պոլսահայութեան մշակութային ու կրթական զարգացման գործին:*

*Իբրեւ սուլթան Մահմուտ Բ.ի անձնական սեղանաւորն ու խորհրդականը՝ այնքան մեծ էր իր ազդեցութիւնը հասարակական կեանքի մէջ, որ պատմաբաններ իր շրջանը կը կոչէին «Պէզճեանի դար»:*

*Պէզճեանի նիւթական միջոցներով հետեւեալ ազգային հաստատութիւնները կառուցուած էին Պոլսոյ մէջ. Հայոց Պատրիարքարանի նոր շէնքը՝ 1823, Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը՝ 1832, Բերայի Օրիորդաց վարժարանը՝ 1826, Գումգաբուի Մայր դպրոցը՝ 1828, Մայր տաճարը՝ 1829, Ս. Առաքելոց Ազգային վարժարանը՝ 1830, Պօղոսեան Տղայոց վարժարանը՝ 1832, Վառվառեան Օրիորդաց դպրոցը՝ 1832, Գումգաբուի Պէզճեան վարժարանը՝ 1832 եւ Ջորս Դասեաց Եկրսեւ Էյուպեան վարժարանը՝ 1832: Ընդամէնը՝ եօթը վարժարան եւ երեք մեծ հաստատութիւններ: Ասոնցմէ դուրս, 1828 թուականին Յարութիւն ամիրա Պէզճեանը Բերայի մէջ կը հիմնէր ասեղնագործութեան դպրոց մը, որ փաստօրէն կը հանդիսանար պոլսահայերու իգական սեռին պատկանող առաջին վարժարանը: Յարութիւն ամիրա Պէզճեանի ծախսով հրատարակուած էր Գէորգ Դպիր Պալաթեցի Տէր Յովհաննէսեանի «Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից» խորագրով աշխատասիրութիւնը: Պէզճեան մասամբ հոգացած էր նաեւ «Հայկազեան Բառարան»ին հրատարակութեան ծախսերը: Պէզճեան ամիրա թաղուած է Գում Գափուի Հայոց Մայր տաճարին գաւիթը: 1828 թուականին կը հիմնուէր Գում Գափուի «Ընծայարան» ուսումնարանը, ուր տնօրէն եւ գլխաւոր ուսուցիչ կը նշանակուէր հռչակաւոր բառարանագիր, քերականագէտ, փիլիսոփայ եւ մանկավարժ Գրիգոր Փէշտիմալճեանը:*

*Փէշտիմալճեան ուսուցչութեան պաշտօն վարած էր նաեւ Մայր տաճարի դպրատան մէջ՝ ուսուցանելով ճարտասանութիւն, տրամաբանութիւն, հայոց լեզուի քերականութիւն եւ կրօնագիտութիւն:*

*Մեր ժամանակը չի ներեր աւելի խորանալու Գր. Փէշտիմալճեանի բազմաթիւ ու բազմերանգ այլ իրագործումներուն մէջ, միայն կարելի է անվարան ըսել, թէ իր շրջանի գերագոյն բանասէր-դպրագէտն էր ան Պոլսոյ մէջ:*

*Մայրաքաղաքին արքունի ճարտարապետութիւնը կը գլխաւորէին Պալեանները, որոնք իրենց «ոսկի մատներով» կը շէնցնէին սուլթանին պալատները: Ծնունդ կ՚առնէր չքնաղ Տոլմա Պահչէն, կը վերանորոգուէր Այա Սոֆիան:*

*Ամբողջ Թուրքիոյ մետաքսագործութեան ճարտարարուեստը, ինչպէս նաեւ հարկահաւաքման գործը վստահուած էր Մկրտիչ ամիրա Ճեզայիրլեանին:*

*Ակնեցի Արփիարեան ամիրայական տունը երկար տարիներ վարեց Թուրքիոյ արծաթի հանքերու վերատեսչութեան գործը:*

## *ԷՖԷՆՏԻՆԵՐ*

*Աւարտելէ առաջ քանի մը խօսք ըսեմ նաեւ պոլսահայ ամիրաներուն յաջորդող էֆէնտիներուն մասին.*

*1856 թուականին Սուլթան Ապտիւլ Մեճիտի հրամանագիրով կը հաստատուէր Օսմանեան դրամատունը, որ պատմութեան մէջ ծանօթ է իբրեւ Պանք Օթոման: Այս պատմական եղելութենէն ետք, սուլթանը, իր պալատականները, նահանգապետ փաշաները եւ այլն, իրենց դրամը կը վերցնէին ոչ թէ հայ ամիրաներէն, այլ՝ Պանք Օթոմանէն: Հետեւաբար հայ մեծահարուստ քաղքենի ամիրաներուն գործն ու տնտեսական դերը մայրաքաղաքին մէջ կը սկսէր շիջիլ:*

*Կը կազմակերպուէին ելեւմտական, ռազմական, ներքին եւ արտաքին գործերու նախարարութիւններ, կը վերակառուցուէր արքունիքը, կը ծաղկէր պետական պաշտօնեաներու եւ մանր առեւտրականներու նոր դաս մը (մանր քաղքենիութիւն), որոնք կը կոչուէին էֆէնտիներ: Մանր քաղքենիութեան պատկանող այս էֆէնտիներէն ոմանք կը նուաճէին տնտեսական բարձունքներ եւ կը տիրանային բարձր պաշտօններու:*

*Պոլսահայ առեւտրականներէն ոմանք հայ խոճաներու հետքերով Հնդկաստանէն կը ներածէին շալեր, համեմներ եւ գոհարեղէն, Իրանէն՝ կերպասներ, Դամասկոսէն՝ բեհեզներ: Ուրիշ հայ վաճառականներ Ֆրանսայէն եւ Իտալիայէն կը բերէին ծանրագին կերպասներ, վենետիկեան հայելիներ, ապակիէ ճրագարաններ, գերմանական սաթ եւ այլ առարկաներ:*

*1861 թուականին Մանչեսթըրի հայ վաճառականներուն թիւը կը հասնէր 30ի: Երկու տարի ետք Մանչեսթըրի մէջ կային 25 հայ մեծ առեւտրականներ, որոնք գաղթած էին Պոլիսէն, Իզմիրէն եւ Կեսարիայէն:*

*Ինչ կը վերաբերի պետական հայ պաշտօնեայ-էֆէնտիներուն, 19րդ դարու երկրորդ կիսուն Պոլսոյ մէջ կային 494 էֆէնտիներ, պետական պաշտօնեաներով: Պետական պաշտօնեաներու այս համեմատութեան ամէնէն փայլուն աստղը, անկասկած, Գաբրիէլ էֆէնտի Նորատունկեանն էր: Ծնած 1852ին, Նորատունկեան իր նախնական կրթութիւնը ստացած էր Սկիւտարի ճեմարանին մէջ եւ ապա՝ Գատը գիւղի ֆրանսական դպրոցը: 1870 – 75 Նորատունկեան իր համալսարանական կրթութիւնը կը ստանար Ֆրանսա՝ մասնագիտանալով քաղաքական գիտութիւններու եւ իրաւաբանութեան ճիւղերուն մէջ: Վերադառնալով Պոլիս՝ ան կը վարէր բարձր պաշտօններ, մինչեւ որ 1912 – 13 թուականներուն կը նշանակուէր Օսմանեան կայսրութեան արտաքին գործոց նախարար:*

*Բարեգործականի հիմնադիր Նուպար Փաշայէն ետք Նորատունկեան կը գլխաւորէր Արեւմտահայոց Ազգային պատուիրակութիւնը Փարիզի մէջ:*

*Գաբրիէլ Նորատունկեան իր կեանքի վերջին տարիները կ՚անցընէր Ֆրանսա, ուր կը մահանար 1936ին:*

*Նորատունկեանի ժամանակակից պոլսահայ համայնքի յայտնի դէմքերէն էր նաեւ Բարեգործականի հիմնադիրներէն տոքթ. Նազարէթ Տաղաւարեանը: Նախապէս Զատրճեան՝ Տաղաւարեան իր բժշկական ուսումը ստացած էր Սորպոնի համալսարանին եւ Փասթէօր հիմնարկին մէջ: Վերադառնալով Պոլիս՝ ան կը սկսէր աշխատիլ մայրաքաղաքի Ֆրանսական հիւանդանոցը: Շուտով կը սկսէր հալածանք Տաղաւարեանի դէմ, այն պատրուակով, թէ ան ազգային գործերով կը զբաղի: Իր կինն ու զաւակները Պուլկարիա փախցնելէ ետք Տաղաւարեան կը ծպտուէր իբրեւ ֆրանսական դեսպանատան պաշտօնեայ եւ, յունական նաւ մը մտնելով, կը հասնէր Մարսէյ: Իր կինն ու զաւակները բերելէ ետք կ՚երթար Եգիպտոս ու կը հաստատուէր Գահիրէ: 1906 թուականին, Պօղոս Նուպար Փաշա, տոքթ. Նազարէթ Տաղաւարեան եւ եօթը այլ անձնաւորութիւններ կը հիմնէին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, նախագահ՝ Պօղոս Նուպար Փաշա, ատենադպիր՝ տոքթ. Նազարէթ Տաղաւարեան:*

*Երկու տարի ետք, 1908, Երիտթուրքերու յեղափոխութենէն ետք, Տաղաւարեան, Նեղոսի խաղաղ ու ապահով ափերը լքելով եւ խաբուած՝ Երիտթուրքերու ստապատիր լոզունգներէն, իր ընտանիքին հետ կը վերադառնար Պոլիս: Մնացեալը՝ Հայոց պատմութիւն...*

*Եզրակացնելու համար իբրեւ պատմաբան՝ ես կրնամ անվարան ըսել, թէ 19րդ դարու Կ. Պոլսոյ հայ համայնքին պատմութիւնը, տնտեսական բարգաւաճումը, կրթական աննախընթաց վերելքը, աշխարհաբար լեզուին մշակումն ու հայ գրականութեան ծաղկումը, յատկապէս մայրաքաղաքին մէջ, կը կազմեն հայոց երեքհազարամեայ պատմութեան ամէնէն փայլուն ու պանծալի էջերէն մէկը:*

*(Շար. 2 եւ վերջ)*


**Երեւանի պետական համալսարանում սփիւռքահայ ուսանողների ուսումնառութեան սկզբնաւորման 50-ամեակին նուիրուած գիտաժողովի եւ միջոցառումների նախաձեռնութեամբ Երեւանի պետական համալսարանի Յոկտեմբեր 3-6, 2007**

**Երեւանի պետական համալսարանը սիրով հրաւիրում է Ձեզ մասնակցելու Երեւանի պետական համալսարանում սփիւռքահայ ուսանողների ուսումնառութեան սկզբնաւորման 50–ամեակին նուիրուած գիտաժողովին եւ միջոցառու!մներին, որոնք կը կայանան 2007 թ. Հոկտեմբերի 3–ից մինչեւ 6–ը:**
**Ձեր ուշադրութեանը ներկայացնելով գիտաժողով–միջոցառման ծրագիրը միաժամանակ խնդրում ենք լրացնել մասնակցութեան համար անհրաժեշտ տուեալները եւ ուղարկել այն հետեւեալ հասցէով.**

**Հասցէ՝ ՀՀ, Երեւան–25, Ալեք Մանուկեան 1**
**ԵՊՀ Սփիւռքի բաժին**
**Հեռ. (+374–10) 555–244**
**Ֆաքս՝ (+374–10) 554–641**
**Էլ. փոստ՝ diaspora@ysu.am**

**Մասնակցութեան համար անհրաժեշտ տուեալներ են.**
1. **Անուն, Ազգանուն**
2. **Աշխատավայր, պաշտօն**
3. **Հասցէ, հեռախօս, ֆաքս, էլ. փոստ**
4. **ՀՀ–ում աւարտած բուհի անուանումը եւ տարեթիւը**

**Յայտերի ներկայացման վերջնաժամկէտն է 2007 թ. Սեպտեմբերի 15–ը:**
**Ցանկութեան դէպքում Երեւանի պետական համալսարանը պատրաստ է ապահովել կացարան ԵՊՀ հիւրերի տանը կամ այլ հիւրանոցում ձեր կողմից բնակութեան ծախսերը հոգալու պայմանով:**

# ԺՈՂՈՎ ԼԵՌԱՆ ՎՐԱՅ

*Շարունակուած էջ 14-էն*

*րոշ եւ անմխիթար պայմաններում, շատեր սպասում են հայրենիք մեկնելու համար: Ինչպէս տեղեկացուած ենք՝ աստիճանաբար եւ հերթաբար են տանելու, ոչ թէ 1944 - 47ի նման անկազմակերպ, անշուշտ դա էլ իր տրամաբանական պատճառն է ունեցել, հիմա պատրաստուած բնակարանների համապատասխան ընտանիքներ են տանելու՝ մտածուած ու կազմակերպուած: Բոլորին տեղափոխելու կարելիութիւնները չկան, ուստի գաղութն երկար ու երկար ժամանակ կը շարունակի իր կեանքը: Մեր ժողովուրդը գիւղերում ապրում էին համախմբուած եւ կարիք չէր զգացւում օտարների հետ յաճախակի յարաբերութիւն եւ շփում: Ինչպէս տեսնում էք այստեղ Թեհրանում բոլորովին տարբեր է, չի կարելի սահմանափակ ապրել, քաղաքի կեանքի դրուածքն է պահանջում, տարբեր բնոյթի շփում եւ յարաբերութիւն: Այն ինչ մտահոգում է ինձ՝ չլինի որ մեր երիտասարդները տարուեն օտարներով եւ խառն ամուսնութիւնների տեղի տան, եթէ այս դէպքերում մենք ազգային - կրօնական դաստիարակչական քարոզչութիւն չտանենք եւ չկարեւորենք ու հակազդեցութիւն ցոյց չտանք որեւէ շեղուած արարքի դիմաց ու խնդիրը անտարբերութեան մատնենք, հաւատացէք կայլասերուենք եւ կը դադարենք հայ լինելուց, ինչպէս որ պատահեց Փերիա գաւառում, հայերի հետ բռնագաղթեցուած վրացիներին, որոնք կրօնափոխ դարձան: Ձեր մեծերից լսած կը լինէք, որ հազուադէպ դէպքեր եղած են, օտարի հետ մօտիկ շփման հետեւանքով հայ աղջկան փախցրել են, բայց ուժով վերադարձրել են, ուրիշ դէպքում էլ չեն կարողացել, քանի որ աղջիկը կամաւ կրօնափոխուել էր:*

*-Տղե՛րք, խնդիրը լրջութեամբ ընդունէք, մեր ազգային պատիւն ու հաւատն է խնդրոյ առարկայ, ուստի դիմում եմ ձեզ մէկ-մէկ ձեր կարծիքն ու առաջարկը ներկայացնել, տեսնենք, ինչ եզրակացութեան կը հանգենք: Սկսենք Արամայիսից.*

*-Անշուշտ նախազգուշացումը կարեւոր է, անտարբեր գտնուելու դէպքում վտանգում ենք մեր ազգային ինքնութիւնը, ուրեմն պէտք է քարոզչութիւններով հարցը ընտանիքների ուշադրութեան յանձնել եւ կազմակերպել խմբակներ: Արդէն իսկ մեր թաղերում նկատուել են դէպքեր, որոնք խոր մտահոգութեան պատճառ դառնալով չեն վրիպել մեր երիտասարդների աչքերից ի խնդիր ազգային արժանապատուութեան պաշտպանութեան: Ազգային արժէքներին պէտք է նախանձախնդիր լինել Սփիւռքում, Ջիւանին ասում է՝ » Ազգը պահող երեք բան կայ՝ կրօն, լեզու եւ հայրենիք«, անհրաժեշտօրէն կարեւոր է մեր ազգային ծինը(գէնը)՝ նկարագիրը, խառնուածքը չվտանգել խառն ամուսնութիւններով: Որոշ ծանծաղ խելքով մարդիկ ասում են՝ խառն ամուսնութիւններն օգտակար են այն տեսակէտից, որ նոր բարեկամներ ենք շահում եւ ծնուած երեխան աւելի ուշիմ է: Նախ՝ այդպիսի դէպքեր գոնէ ես չեմ յիշում, ապա՝ այդպիսի ամուսնութիւնները տեւական չեն լինում, դեռ աւելին՝ բաժանումից յետոյ հակառակ արդիւնքն է ստացւում: Ասում են՝ եթէ օտարը քրիստոնեայ լինի՝ վնաս չունի: Օտարը՝ օտար է, ինչ ազգից ու կրօնից էլ լինի, նա օտար է եւ խորթ մեր մշակոյթին , սովորութեանց եւ ձգտումներին, այս իմ խօսքերը մի նկատէք հակակրանք տարբեր ազգերի նկատմամբ, լոկ իմ տեսակէտն է խառն ամուսնութիւնների կապակցութեամբ:*

*-Շնորհակալութիւն Արամայիսին իր մտքերի համար, հիմա խօսքը տանք Արմէնին, տեսնենք իր տեսակէտն ինչ է, Անդրանիկն էր.*

*-Իմ կարծիքով հարցը շատ էլ մտահոգիչ չէ, քանի որ մեր անցեալի կեանքը արդէն իսկ ցոյց է տուել մեր ժողովրդի խոր գիտակցութիւնը եւ զգայնութիւնը ի պաշտպանութիւն ազգային արժէքների եւ նողկանք նրանց նկատմամբ, որոնք օտարին ծածուկ ու գաղտնի հարս էին գնում, կամ օտար հարս էին բերում, այդպիսի օրինազանցները վտարւում էին ընտանիքից եւ զրկւում իրենց ժառանգութիւնից, հիմա էլ նոյն հոգեբանութիւնն է տիրակալ: Այդպիսի դէպքեր շատ հազուադէպ են պատահել եւ ոչ արժանի յիշատակութեան: Այդուհանդերձ զգուշութիւնը լաւ բան է, քանի որ մեր ժողովրդի միջավայրը փոխուել է, գիւղից քաղաք է տեղափոխուել, կղզիացած վիճակից դուրս է եկել եւ իր յարաբերութեան դաշտը ընդարձակուել է:*

*Օրը տարաժամում էր, արեւը գնում էր մայրամուտին մօտենալ, իսկ մեր հայրենասէր տղաները լեռնային այդ սառն օդին ենթակայ առանց որեւէ դժգոհանքի շարունակում էին իրենց ընկերական ժողովը շատ քաղցր ու մտերմական մթնոլորտում մերթ ընդ մերթ կատակներ անելով եւ բարձրաձայն քրքջալով: Ազգային հարցերը քննելիս լրջանում, ոգեւորւում եւ անվերապահ իրենց մտածելակերպն էին յայտնում արծարծուած հարցերի շուրջ:*

*-Ես սրտով հոգով համաձայն եմ ձեր արտայայտած տեսակէտներին, մտքերի փոխանակութիւնը մեզ մօտեցնում է իսկական անելիքին, ճամբան հարթւում է մեր արարքներով նպատակին հասնելու համար, հետեւաբար կարեւոր քայլը գործնականն է, կազմակերպչական ծրագիրներ նկատի ունենալն է: Ես համոզուած եմ, որ փոքրիկ պատանեկան խմբեր կեանքի կոչել տարբեր թաղամասերում, մեր հսկողութեամբ եւ ղեկավարութեամբ: Մեզանից իւրաքանչիւրը թող պատասխանատու նկատուի այդ աշխատանքը տանելու:*

*Հայկն էր իր հնչեղ ձայնով խօսողը, նա մինչ իր հերթը հասնի՝ ուշ ի ուշով լսելով ասուած խօսքերը, այս եզրակացութեան հասաւ՝ բոլորի հաւանութեան արժանանալով:*

*Վերջին խօսողը եղաւ Արսէնը, որը գնահատելով մինչ այդ ասուածները բոլորին հրաւիրեց կշռադատուած գործի անցնել.*

*-Ես հակառակ չեմ խմբեր կեանքի կոչելուն, միայն թէ նրանց այնպէս պէտք է դաստիարակել, որ աշխատանքներ տանեն մեր հսկողութեան ներքոյ: Շատ նուրբ հարց է սա, յանկարծ չլինի թաղերի մէջ կռիւ ու վէճ առաջացնեն, ժողովուրդի խաղաղ կեանքը վրդովեն, եթէ ոտնձգութիւններ կամ շեղումներ են նկատւում, այս դէպքում խոհեմութեամբ եւ մտերմաբար հարցերը լուծել: Պատահել են հայ աղջկայ առեւանգման դէպքեր, որի հետեւանքով ոստիկանութիւնը յանցաւորներին ձերբակալել եւ խիստ պատժի է ենթարկել: Այս յիշելով ուզեցի ուշադրութեան յանձնել այն, որ խուսափենք միջ-կրօնական խնդիրներ առաջացնելուց, մեր իրաւունքն է մեր ազգային պատիւն ու արժանապատուութիւնը պահել ու պաշտպանել աներկբայօրէն: Յուսով եմ իմ ընկերները կարեւորութեամբ նկատի կ'ունենան ասուած խօսքերը:*

*-Ախպրտիք ջա՛ն, բոլորից էլ շնորհակալ եմ, այսպէս տրամաբանօրէն վերլուծեցիք եւ անկողմնակալօրէն մեկնաբանեցիք արծարծուած խնդիրները, որոնք առնչւում են հայրենիք ներգաղթողներին եւ մեր համայնքի հայօրէն գոյատեւման, անշուշտ սա առաջին անգամը չի եղել եւ վերջինն էլ չի լինելու՝ մեր նման երիտասարդներ, ազգի եւ հայրենիքի պաշտպաններ, ժողովի են նստում: Չորս հարիւր տարիների մեր կեանքը անմասն չի մնացել ալեկոծութիւններից եւ ոգորումներից, ով գիտէ բիւր անգամներ ժողովների են նստել, մտքեր են մտածել, ճամբաներ են խորհել, որպէսզի օգնեն ժողովրդին անփորձանք եւ նոյնիսկ նուազ վնասներով իրենց հայկական կեանքը շարունակեն:*

*-Այստեղ յարմար եմ նկատում յիշել պատմական մի դէպք, որը մեզ է փոխանցել Հայկ Յովսէփեանը «Հարսի կոնդը» պօէմ աշխատասիրութեամբ: Պատմւում է, թէ՝ 1705 թ.-ին Իրանի հարաւում գտնուող հայաբնակ ներքին Բուրվարի գաւառի Փարմիշան գիւղում գտնւում էր մի հողաբլուր, Կոնդ անունով: Այդ Կոնդի շուրջը Համբարձման տօնն էր կատարւում ուրախ ու զուարթ գիւղի ազգաբնակչութեան կողմից: Գիւղատէր Ալիխանը իր ձիաւոր ծառաներով որպէս անկոչ հիւր ներկայ է գտնւում: Տանուտէր Եղօն ներքուստ դժկամ ու մտահոգ նրան եւ ծառաներին Կոնդի վերեւում տեղ է յարմարեցնում եւ լաւապէս հիւրասիրւում է, իսկ Կոնդի շուրջը շարունակւում է Համբարձման տօնակատարութիւնը աղջիկների եւ երիտասարդների պարերով: Խանն ու ծառաներ կերած յղփացած յանկարծ Կոնդից իջնում եւ ձիերին նստած վարում են դէպի պարող աղջիկների խումբը, նրանք փախցնում են գեղանի Սոնային՝ տանուտէր Եղոյի Արա տղայի նշանածին : Փախուստի գոյժը անմիջապէս տարածւում է գիւղում, ալեկոծւում է գիւղը՝ «Իրար անցնում վազրացած»: Գիւղի մեծերը ժողով են գումարում եւ որոշում են գիւղացիութիւնը գաղթեցնել դէպի մայր հայրենիք, իսկ իրենք յարձակուեն խանի ամրոցի վրայ եւ Սոնային ազատեն: Յարձակումը կատարւում է գիշերով, վրիժառու կտրիճները սպանում են խանին եւ Սոնան անարատ ազատւում է: Նրանք գաղթում են դէպի Հայաստան: Պօէմի վերջում հեղինակը կէս մնացած քարաւանի հասնելը Արագին այսպէս է նկարագրում՝*

Ճիւղակոտոր քարաւանն յամառ,
Անխոնջ քայլեց անդադար,
Գիշերները ճամբայ մաշեց,
Ցերեկները բանակեց:

Ու Յունիսեան մի լուաբաց,
Մի լուսաշող այգեբաց,
Երբ Նայիրին նոր էր զարթնում
Վաղնջական մշուշում,

Երբ Մասիսը նոր էր ժպտում
Հրաշափառ շողերում,
Քարաւանը Փարմիշանի
Հասաւ ափին Արագի:

*Այսպէս մեր պապերը յաճախակի մաքառումներով են ապրել իրենց կեանքը վասն պատուի եւ ազգային արժէքների պահպանման:*

*Յարգանք ձեզ մեր արի պապեր:*

*-Հայրենիքից հեռու հայ մնալու, հայ ապրելու համար զոհողութիւններ, ճիգ ու աշխատանք են պահանջւում, իսկ հայրենիքում քո ճիգն ու աշխատանքը հայրենակերտումի ուղղութեամբ է գնում՝ հայրենիքի կառոյցի վրայ մի աղիւս աւելացնելով:*

*-Դարձեալ եւ դարձեալ ժողովի ենք նստելու գործնական աշխատանքներ ծրագրելու համար, հիմա պատրաստուենք, սարից ցած իջնենք, ինչպէս նկատում էք արեւն էլ բաւական թեքուել եւ պատրաստւում է իր կենարար լոյսն ու ջերմութիւնը հաւաքել ու անցնել երկրագունդի միւս կողմը, չէ որ նրանք էլ արեւի գոյութեամբ են ապրում, թող որ կեանքը յարատեւ շարունակուի ժողովուրդների միասնական եւ խաղաղ կեանքով կենսատու արեւի շողշողուն ճառագայթների լոյսի ներքոյ:*

*Հրաշափառ արեւն իր բոսոր ճառագայթները փռած արեւմտեան լեռնաշղթայի բարձունքին մեր երիտասարդների աչքերի առջեւ պարզել էր վարդագոյն ներկուած հսկայական մի պաստառ:*

*Մեր երիտասարդները յոգնած ու պարտասուած օրուայ լեռնագնացութիւնից, սակայն ուրախ եւ գոհ օրուայ արդիւնաւէտ ժողովներից, իրենց վաղուայ անելիքների ծրագիրը խորհրդակցաբար ճշտած պիտի աշխատանքի անցնեն իրենց մասն ու բաժինը բերելու իրենց ժողովրդին ծառայելու համար: Նրանք լիցքաւորուած նուիրուածութեան ազնիւ գաղափարներով մէկը-մէկու հրաժեշտ տալով մեկնում են իրենց տուները:*

*Նրանք իրենց պապերի կտակին գիտակից արեւի նոր ծագումով ուժակալուած աշխատանքի պիտի լծուեն:*

*(Շար. 2 եւ վերջ)*

**New Offices For Lease**

*IN PASADENA*

On Allen Ave. • South of Washington Blvd.

Available spaces are between

250sq.ft. *TO* 460sq.ft.

***ALL UTILITIES ARE INCLUDED***



For More Details

Call Vartan

(626) 255-2537

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՆԵՐՈՒ ԼԻԿԱՅԻ ԵՒ ՈՒԵՖԱ-Ի ԳԱՒԱԹԻ ՋՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

### *ՏԷՐԻ ՍԻԹԻ (ԻՐԼԱՆՏԱ) - ՓԻՒՆԻԿ 0-0*
### *ՓԻՒՆԻԿ - ՏԷՐԻ ՍԻԹԻ 2-0*



*Ֆուտբոլի Հայաստանի չեմպիոն «Փիւնիկի» նորամուտը Չեմպիոնների լիգայի 2007-08թթ. խաղարկութիւնում կարելի է յաջող համարել որը վերջապես կարողացաւ յաղթահարել որակաւորման առաջին փուլի արգելքը:*

*Յուլիս 18-ին առաջին խաղում հայկական թիմը հիւրընկալուելիս՝ 0:0 հաշուով աւարտեց հանդիպումը իրլանդական «Տէրի Սիթիի» հետ:*

*Յուլիս 25-ին Վազգէն Սարգսեանի անուան «Հանրա-պետական» մարզադաշտում տեղի ունեցած պատասխան հանդիպումին «Փիւնիկը» 2:0 հաշուով առաւելութեան հասաւ իրլանտական թիմի նկատմամբ:*

*Հայկական թիմի կոլերը խբեցին 27-րդ րոպէին Արսէն Ավետիսեանը եւ 67-րդ րոպէին Գեւորգ Ղազարեանի:*

*Որակաւորման երկրորդ փուլում «Փիւնիկը» մրցելու է Ուկրաինայի փոխչեմպիոն «Շախտյորի» հետ: Առաջին մրցավէճը կայանալու է Երեւանում Յուլիսի 31-ին, իսկ պատասխան հանդիպումը Դոնեցկում՝ Օգոստոսի 8-ին:*

### *ԲԱՆԱՆՑ - ԵԱՆԿ ՊՈՅԶ (ԶՈՒԻՑԵՐԻԱ) 1-1*

*Երեւանի «Բանանցի» եւ շուէցարական «Եանգ Պոյզի» միջեւ ՈՒԵՖԱ-ի գաւաթի որակաւորման առաջին փուլի շրջանակներում կայացած հանդիպումը աւարտուեց 1:1 հաշուով:*

*Սա կարելի է լաւ արդիւնք համարել «Բանանցի» համար, որը իր խաղամակարդակով զգալիօրէն զիջում էր մրցակցին: Հայ ֆուտբոլիստները խաղադաշտ մտան բաւական կաշկանդուած եւ արդէն 15-րդ րոպէին գնդակ ընդունեցին սեփական դարպասը. անկիւնայինի խաղարկումից յետոյ աչքի ընկաւ մօտ 2 մեթր հասակ ունեցող Մանգանէն:*

*Մինչեւ առաջին կէսի աւարտը «Բանանցը» կարող էր հաւասարեցնել հաշիւը, սակայն Արա Յակոբյանը վրիպեց նպաստաւոր դիրքից: 67-րդ րոպէին Էդուարդ Կակոսեանին վերջապէս յաջողուեց խփել պատասխան գնդակը եւ հանդիպումը այդպէս էլ աւարտուեց:*

### *ՄՏԿ (ՀՈՒՆԳԱՐԻԱ) - ՄԻԿԱ 2-1*

*Հայաստանի 2006թ. բրոնզէ մեդալակիր «Միկան» եւս սկսեց իր ելոյթները ՈՒԵՖԱ-ի գաւաթի խաղարկութեան որակաւորման 1-ին փուլում: Արկադի Անդրէասեանի սաները Բուդապեշտում հիւրընկալուեցին տեղի ՄՏԿ-ին:*

*Թէեւ խաղից առաջ ենթադրւում էր, թէ դաշտի տէրերը կը յաղթեն մեծ առաւելութեամբ, սակայն «Միկային» յաջողուեց լուրջ դիմադրութիւն ցոյց տալ մրցակցին, որը հաշիւը բացեց 20-րդ րոպէին: Աչքի ընկաւ ՄՏԿ-ի առանցքային ֆուտբոլիստ Պինտերը:*

*Առաջին կէսի վերջին րոպէին «Միկայի» բրազիլացի լեգէոներ Լուիս Կլեբերին յաջողուեց հաւասարեցնել հաշիւը: Սակայն 2-րդ կէսի սկզբնամասում Ուրբանը կրկին առաջ մղեց ՄՏԿ-ին եւ հանդիպումը աւարտուեց 2:1 հաշուով:*

*Զնայած «Միկան» պարտուեց, սակայն յաջորդ փուլ դուրս գալու լաւ հնարաւորութիւն ստացաւ, քանի որ նման հանդիպումներում շատ կարեւոր է մրցակցի հարկի տակ գոլ խփելը: Այժմ Երեւանում «Միկան» նոյնիսկ 1:0 հաշուով յաղթելու դէպքում կը նուաճի որակաւորման 2-րդ փուլի ուղեգիր:*

## Հ.Ե.Ը–Ի ՓԱՍԱՏԻՆԱ – ԿԼԷՆՏԷՅԼ ՏԱՐԵԿԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ

*Ստորեւ կը ներկայացնենք առաջին շաբթուայ արդիւնքները:*

| | |
|---|---|
| *Հ.Մ.Մ. Փասատինա ընդ Հ.Մ.Մ. Կլէնտէյլ* | *74 - 57* |
| *Հ.Ե.Ը. Փասատինա ընդ Հ.Ե.Ը. Կլէնտէյլ* | *67 - 49* |
| *Հ.Մ.Մ. Փասատինա ընդ Հ.Ե.Ը. Կլէնտէյլ* | *76 - 75* |
| *Հ.Ե.Ը. Փասատինա ընդ Հայ Եղբայրակցութիւն* | *36 - 31* |

## Հ.Մ.Մ. ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Ուրախութեամբ կու գանք ձեզի տեղեկացնելու թէ ամէն Շաբաթ առաւօտեան ժամը 10:30էն մինչեւ 1:00 տեղի պիտի ունենայ սկաուտական դասընթացքներ: Անոնք որ կը փափաքին մաս կազմել սկաուտական կամ պասքեթպոլի խումբերուն կրնան դիմել Գաբրիէլ Մխիթարեանին՝ (626) 376-2658 եւ կամ Հ.Մ.Մ.ի Կեդրոնը՝ (626) 398-0506, 1060 N. Allen Ave. Pasadena

Մանրամասնութիւններուն համար կրնաք հետեւիլ »Մասիս« շաբաթաթերթին:

**www.massisweekly.com**
**massis2@earthlink.net**

## ԱՐԺԵՆՏԻՆԱՅԻ ՖՈՒՏՊՈԼԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ԴԱՐՁԱՒ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ

*Կիրակի օրը Թորոնթոյում (Քանատա) աւարտուեց ֆուտպոլի աշխարհի երիտասարդական առաջնութիւնը: Ախոյեանի տիտղոսը նուաճեց մինչեւ 20 տարեկան ֆուտպոլիստների Արժենթինայի հաւաքականը՝ եզրափակիչում 2:1 հաշուով յաղթելով Չեխիայի հաւաքականին:*

*Վերջին 7 առաջնութիւններում սա արժենթինացիների 5-րդ յաղթանակն է:*

*Երրորդ տեղի համար պայքարում Չիլիի հաւաքականը մէկ անպատասխան գնդակ խփեց Աւստրիայի հաւաքականի դարպասը:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ 9-ՐԴ ՓԱՌԱՏՕՆԻՆ

*Կիրակի օրը Սերբիայի մայրաքաղաքում տեղի կ'ունենայ Եւրոպայի երիտասարդութեան Օլիմպիական 9-րդ փառատօնի բացումը: Փառատօնին մասնակցում է 49 երկիր, այդ թւում՝ Հայաստանը:*

*Օլիմպիական կրակը Աթէնքից արդէն բերուել է Բելգրադ: Յունաստանի Օլիմպիական կոմիտէի փոխնախագահ Իսիդորոս Կուվելոսը այն փոխանցել է Եւրոպայի երիտասարդութեան Օլիմպիական 9-րդ փառատօնի կազմկոմիտէի ղեկավար Ռադմիլա Հրուստանովիչին:*

*Հայաստանի Երիտասարդութեան եւ Սպորտի հարցերով նախարարութեան մամլոյ ծառայութեան ղեկավար, Հայաստանի մարզական լրագրողների ֆեդերացիայի նախագահ Եուրա Ալեքսանեանը «Ազատութիւն» ռադիոկայանին հաղորդեց, որ Հայաստանի պատուիրակութեան կազմում 28 մարդ է, այդ թւում 18 մարզիկ, 7 մարզիչ եւ մէկ մրցավար:*

*«Մեր երիտասարդները հանդէս կը գան սպորտային մարմնամարզութեան, սեղանի թենիսի, լողի, թեթեւ ատլետիկայի եւ այլ մարզաձեւերում», - ասաց Եուրա Ալեքսանեանը:*

*Շաբաթ օրուանից մարզիկները հաւաքւում են Բելգրադում: Մրցումները սկսւում են Կիրակի օրը եւ կ'աւարտուեն Յուլիսի 27-ին:*

*Եւրոպայի Երիտասարդութեան Օլիմպիական առաջին փառատօնը կայացել է 1991 թուականին. այն ժամանակ մրցումներն անուանել են Եւրոպայի Երիտասարդութեան Օլիմպիական խաղեր: Ինչպէս եւ օլիմպիական խաղերում, երիտասարդները պայքար են մղում թէ ամառային եւ թէ ձմեռային մարզաձեւերում:*

*Եւրոպայի Երիտասարդութեան Օլիմպիական ձմեռային փառատօնի մրցումները տեղի են ունենում 2001 թուականից: Վերջին ձմեռային մրցումներն անցկացուել են այս տարուայ Փետրուարին Սպանիայում:*

## «ԱՅՍ ՏՈՒՆԸ ՔՈՒ՞ԿԴ Է ԹԷ ԻՄՍ»

*Շարունակուած էջ 6–էն*

*վայրկեանէն ունկնդիրը կը դրուէր քննարկուած գրքի բովանդակութեան, ոգիին եւ արծարծած նիւթին խորքին հետ: Հանդիսավարը ապա հերթով բեմ կը հրաւիրէր յայտագրի իւրաքանչիւր մասնակիցը: Այսպէս Նոր Սերունդ Մշակութային Միութեան անունով ելոյթ կ'ունենայ Յարութ Տէր Դաւիթեան, պատշաճ, կարճ եւ կուռ ելոյթ մը (տեսնել քովի սիւնակին մէջ): Նոյնպէս կարճ եւ գնահատական խօսք մը ըրաւ, Համազգայինի կողմէ, Ժիլիէթ Դաւթեան, զգացական եւ ապրումային ելոյթ մը ունեցած հեղինակի հօր, Վազգէնին աշակերտած, Հալէպի մէջ եւ պապենական «Աղըն» գիւղի վերապրող, մտաւորական եւ գրող Թորգոմ Փօսթաճեան, ինչպէս նաեւ սրտի յուզիչ խօսք ըրաւ Խանճեանի մանկութեան բարեկամ՝ Զարեհ Սաֆուլեան:*

*Օրուայ գլխաւոր բանախօսն էր եւ Նոր հրատարակուող գրքի բովանդակութեան քննարկողն ու արժեւորողը Տիար Սարգիս Մաճառեան: Պէտք է անվիճելիօրէն գնահատել եւ շնորհաւորել Ս. Մաճառեանը իր ելոյթին համար, խղճամիտ եւ խորաթափանց քննարկում մը որ Խանճեանի գրքէն շատ աւելի հեռուները գացած էր, ներկայ հասարակութեան հրամցնելու համար ուղեւորական, ճամբորդական գրականութեան պատմութիւնն ու էութիւնը: Ապա, Մաճառեան կ'անցնի Խանճեանի գրքի 12 գլուխներու հակիրճ մէջ ներկայացման, ունկնդիրները վերահասու դարձնելով անոնց ներքին տրամադրութեան, մանաւանդ ազգային կարօտագին ապրումներուն: Մաճառեան իր քննարկումը կ'աւարտէ հետեւեալ խօսքերով.*

*«Բծախնդիր աշխատանքով, իրապաշտ խոկումներով, ուրոյն ոճով եւ մանաւանդ հայրենասիրական բարձր ոգիով գրուած Զաւէն Խանճեանի «Այս Տունը քո՞ւկդ է թէ իմս» հատորը կարեւոր ներդրում մըն է մեր ուղեւորական գրականութեան անդաստանէն ներս»:*

*Մաճառեանի սպառիչ ելոյթէն ետք, բեմ կը բարձրանայ հեղինակին կողակիցը, Սոնա Խանճեան, որ ներկաներուն կը փոխանցէ իրապէս յուզիչ եւ երգախառն մատուցում-ընթերցում մը, սահիկներու միջոցաւ: Անվարան, Սոնան պիտի նկարագրէինք իբրեւ երեկոյի յաջողութեան բանալի անձնաւորութիւններէն մէկը, իր բեմական կեցուածքով եւ գրքի հատուածներու ընթերցումով: Սոնան եւ իրեն յաջորդող ժողովրդական երգիչ՝ Գագիկ Պատալեանը, իր կատարումներով իրապէս հանդիսացան գեղարուեստական վայելքի մատուցողներ: Եթէ երեկոն նմանցնենք համով կարկանդակի մը, այս երկուքը անվարան հանդիսացան կարկանդակի վրայի «քրեմը» այնքան որ համով էին իրենց ելոյթները:*

*Երեկոն պիտի աւարտէ հեղինակը, Զաւէն Խանճեան, իր գնահատական եւ շնորհակալական խօսքերով ձեռնարկի կազմակերպողներն, յայտագրի մասնակցողներուն, իրենց շրջապատոյտի պատասխանատու՝ Արմէն Արոյեանին եւ ներկայ հասարակութեան: Ձեռնարկի աւարտին տեղի ունեցաւ պատշաճ հիւրասիրութիւն եւ հեղինակի գրքին վաճառք:*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



ԵՐՋԱՆՈՒՀԻ ԳԸՎԸՐԵԱՆ

*ԵՐՋԱՆՈՒՀԻ ԳԸՎԸՐԵԱՆի մահուան (որ պատահեցաւ Մոնթրէալ, Քանատա) քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Օգոստոս 5ին, Վէն Նայսի Ս. Պետրոս Հայց. Առաք. եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. եւ անմահ Պատարագի (17231 Sherman Way):*

*Սգակիրներ՝*

*Տղան՝ Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Գըվըրեան եւ զաւակունք (Քանատա)*

*Դուստրը՝ Տիկ. Մարօ Նիկողոսեան եւ զաւակունք (Տուպայ)*

*Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Միսաք եւ Անի Շիթիլեան եւ զաւակունք*

*եւ համայն Գըվըրեան, Նիկողոսեան, Շիթիլեան, Պօյաճեան, Մուրատեան, Վանլեան, Գուլեան, Աւետիսեան, Chervenkov, Յարութիւնեան եւ Ազատեան ընտանիքներ:*

*Հանգուցեալի յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ԵՐՋԱՆՈՒՀԻ ԳԸՎԸՐԵԱՆի մահուան քառասունքին առթիւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը իր խորազգաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն, յատկապէս Գըվըրեան եւ Շիթիլեան ընտանիքներուն:*

## ՅՈՎԱՆ ՍԻՄՈՆԵԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ՀԷՄՇԻՆ» ՀԱՏՈՐԸ

*Շարունակուած էջ 7-էն*

*Ապա հանդիսավարը հրաւիրեց հանդիսութեան ներկայ եղող բոլոր գրողները որպէսզի կատարեն «Գինեձօն»ի արարողութիւնը: Հրաւիրուեցաւ նաեւ հեղինակը որ շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչներուն եւ ներկաներուն որոնք քաջալերեցին սոյն ձեռնարկը:*

*Հուսկ բանքը կատարեց Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեանը որ ըսաւ. «Այս երեկոն իր նկարագրով շատ տարբեր է միւս բոլոր երեկոներէն որոնք կը կազմակերպուին գաղութի կեանքին մէջ: Այս գիրքը իր բովանդակութեամբ հայ գրականութեան պատմութեան մէջ փաստագրական առումով կարեւոր է, որովհետեւ մեր ժողովուրդին կեանքին մէջ ապրող որոշակի հատուած մը, շատ հասկնալի պատճառներով ճնշումներու տակ, պարտադրաբար հեռացած են կրօնքներէն, իրենց ազգային աւանդութիւններէն, պահած են նկարագրի որոշ գիծեր, որոնք երբ ժամանակը գայ կրնան դառնալ որոշիչ նշանակութիւն ունեցող յատկանիշներ, հայ ժողովուրդը վերադարձնելու համար դէպի իր արմատները: Երեկոն դաստիարակիչ էր որովհետեւ առաջին անգամն է որ այսքան համապարփակ, այսքան երկարաշունչ խօսքեր լսեցինք եւ ընթերցեցինք: Ահա վկայութիւն մը, ժողովուրդ մը, որ կը պատմէ եւ կը խօսի Եղեռնի Ցեղասպանութեան նահատակ ժողովուրդի մասին, որոնցմէ բեկորներ են որոնք կ'ապրին Թուրքիոյ սահմաններուն մէջ եւ որոնք շարունակօրէն պատգամ կը դառնան մեզի համար պահելու պահպանելու այն ոգին որ Եղեռնի նահատակ սերունդի ոգին էր: Շնորհաւորութիւններ Յովան Սիմոնեանին եւ մաղթանքներ, որպէսզի այս աշխատանքին մէջ յառաջ նորանոր փաստագրական տուեալներ տրամադրելու եւ հրամցնելու համար ոչ միայն հայ աշխարհին, այլ մասնաւորապէս յաջս այն պետութեանց որոնք մերժեցին եղեռնը եւ տակաւին կը մերժեն: Աստուծոյ օրհնութիւնը ձեզի հետ ըլլայ»:*

*Պոլսահայ Միութեան Կեդրոնական Վարժարանի Սանուց Յանձնախումբի երկու ատենապետներուն կողմէ, օրուայ մեծարեալ Յովան Սիմոնեանին նուիրուեցաւ գնահատանքի յատուկ յուշատախտակ:*

*Հանդիսութեան աւարտին, հեղինակը մակագրեց իր գրած հատորները: Տեղի ունեցաւ նաեւ յատուկ հիւրասիրութիւն:*

*Ներկաները ամբողջովին եւ կամաւոր, զգացականօրէն հրապուրուած էին սոյն հատորով, թէեւ ունենալով վշտի եւ տխրութեան վայրկեաններ, բայց նաեւ՝ մեծ իմաստութեան, յատակատեսութեան եւ յոյսի:*

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ՀԵՏ

*Շարունակուած էջ 5-էն*

*իրենց յաղթանակին:*

- Պարոն Ղուկասեան, ԵԽ գլխաւոր քարտուղար Թերի Դեւիսը բաւական կտրուկ էր արտայայտուել ԼՂՀ նախագահի ընտրութիւնների վերաբերեալ: Ձեր կարծիքով, ոչ հայանպաստ այդ յայտարարութիւնը ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ բանակցային գործընթացի վրայ:

*- Չեմ կարծում, որ այդ յայտարարութիւնը կարող է ինչ-որ ազդեցութիւն ունենալ բանակցային գործընթացի վրայ: Դժբախտաբար, քաղաքական գործընթացները, կոնիւնկտուրան շատ են թելադրում միջազգային կառոյցներին նման յայտարարութիւններ անելու: Կարծում եմ՝ բաւական սուբիեկտիւ յայտարարութիւն է, կարծում եմ, որ Թերի Դեւիսի մակարդակի պաշտօնեան իրաւունք չունի այդքան անշրջահայեաց լինել. եթէ նա ցանկանում է չէզոք երեւալ, այդ թւում նաեւ՝ Լեռնային Ղարաբաղի համար, հաւանաբար նման յայտարարութիւններ չպէտք է անէր: Կարծում եմ, որ հենց այդպիսի յայտարարութիւններն են վնասում բանակցային գործընթացին: Իսկ ինչ վերաբերում է նրան, որ կարող է ինչ-որ կերպ ազդել կողմերի դիրքորոշումների վրայ, բացառւում է: Մենք պնդում ենք մեր անկախութիւնը ոչ այն բանի համար՝ դո՞ւր է գալիս այն Թերի Դեւիսին, թէ՞ ոչ: Թերի Դեւիսը կարող է անել եւ մտածել այն, ինչ ցանկանում է: Մենք ունենք մեր դիրքորոշումը եւ պնդում ենք այն: Վերջին հաշւով, Թերի Դեւիսը ապրանք չէ:*

- Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է իրատեսական Վարդան Օսկանեանի լաւատեսութիւնը՝ կապուած բանակցային գործընթացի հետ: Այսինքն՝ կա՞յ որոշակի առաջընթաց, որը կարող է լաւատեսութեան հիմք դառնալ:

*- Դիւանագիտութեան մէջ, բանակցային գործընթացում շատ դժուար է որեւէ յստակ կանխատեսումներ անել, քանի որ այն շօշափելի նիւթ չէ, եւ շատ բաներ կախուած են օբիեկտիւ եւ սուբիեկտիւ հանգամանքներից: Քաղաքականութեան մէջ լաւատեսութիւնը անհրաժեշտութիւն է, եւ եթէ լաւատես չես, դժուար թէ կը կարողանաս ինչ-որ բանի շուրջ պայմանաւորուել քո ընդդիմախօսի հետ: Այսինքն՝ լաւատեսութիւնը միշտ է պէտք: Սակայն լաւատեսութիւնն ամենեւին չի նշանակում, որ այսօր մօտ ենք կարգաւորմանը եւ վաղն անպայման ինչ-որ բան ստորագրելու ենք:*

*Ես ունեմ իմ դիրքորոշումը. տուեալ դէպքում ես ոչ լաւատես եմ, ոչ յոռետես, ես իրատես եմ: Ես հաշուի եմ առնում այն, որ բանակցութիւնների յստակ փուլերը, յստակ հանդիպումները չեն կարող եզրահանգումների հիմք դառնալ: Ես եզրակացութիւններ անում եմ նրանից, թէ, ասենք, ինչ է ասում Ատրպէյճանի նախագահը իր ժողովրդին, ինչ տարբերակներ կան, վերլուծում եմ մամուլը, եւ այդ ամէնը, ցաւօք, այսօր ինձ լաւատեսութիւն չեն ներշնչում, թէ հիմնախնդիրը մօտ է կարգաւորմանը, քանի որ ես Ատրպէյճանի դիրքորոշումներում կառուցողական ոչինչ չեմ տեսնում: Իսկ միակողմանի զիջումներ մեր կողմից, բնականաբար, չեն լինի:*

**ՕՖԵԼԻԱ ՔՈՉԱՐԵԱՆ**
*Ստեփանակերտ*

## ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՑԻ ՄԱՍԻՆ

*Շարունակուած էջ 15-էն*

բաղաճ, *Շաւարշաւան,*
բաղջ, *Նոր Ջուղա,* բաչուf, *Ակն,*
պաղարջ, *Սասուն,*
պաղարճ, *Գորիս, Շամախի, Մըշկեղ,*
պա"ղարճ, *Հաթերք, Կոճերեր,*
պա"ղա°րճ, *Շատախ,*
պաղա"րճ, *Վահան,*
պա"ղաճ, *Այնթափ,*
պա"ղա"րճ, *Նաւուր,*
պա"ղա"րչ, *Ուրմիա,*
պա"ղա"ճ, *Գետազատ,*
պաղաջ, *Աղաւնաձոր,*
պաղաճ, *Տանակերտ, Կարճեւան, Կաքաւաբերդ,*
պաղաչ, *Երզնկա, Խարբերդ,*
պէղարճ, *Օրդուբադ,*
պէղաճ, *Քարագլուխ, Շուշի,*
պու"ղու"ոճ, *Վան,*
փաղարչ, *Մալաթիա,*
կըլօջ, *Հազզօ, Խոսրովաւան, Իշխու, Փսանք, Բուլանըխ,*
կըլօճ, *Դիադին, Տեղեր, Արճակ, Ամբերդ, Սուրմալու,*
կուլիկ, *Բեժանօ,*
չօ''րա"գ, *Համշէն,*
փա"թա", *Վան,*
կըրկէնէ, *Ղափան,*
կըրկենի, *Շամուտ,*
փուռնիկ, *Ծաղկունք, Շահումեան,*
կաթնահունց, *Քանաքեռ, Կաղզուան,*
կըթնահունց, *Ջափար,*
բ'օմբի, *Կարճեւան,*
պուղարջա, *Համշէն,*
փիդէ, *Ռոդոսթօ,*
լօխում, *Ալաստան,*
նըղըցպաղարճ, *Խնձորեսկ,*
խաղօվ հ^ու^օ^ա^ց, *Բէյլան,*
ըշկըվը, *Քոփ,*
բիշի, *Մարաղա,*
ֆըտ^ը^իր, *Հազզօ եւ այլն:*

*Բաղարջ բառին հոմանիշ բոկեղ բառը բարբառներում հնչիւնական տարբերակներ չունի եւ հանդէս է բերում միայն բառային զուգաբանութիւններ: Ինչպէս՝ պաղարճ, Զագլիկ, պէղարճ, Ծարտար, Հաթերք, բօքօն, Ջրվէժ, սիմիթ, Ռոդոսթօ, պէպիկ, Փարաղաշ, պօբիգ, Օրդու, տէպէգ', Խանազահ, ք'օ''մբա", Մարաղա եւ այլն:*

*Սուրբ սեղանի վրայ օրհնուող սուրբ հացի անուանումների այս բազմազանութիւնը վկայում է բարբառախօսների բարեպաշտութեան եւ քրիստոնէական աւանդոյթի հանդէպ ունեցած նուիրուածութեան մասին:*

## ԳՐԱՒՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| Օգոստոս 5 | «Մասիս» Շաբաթաթերթի ճաշկերոյթ |
| Սեպտեմբեր 1,2,3 | Հ.Մ.Մ. Փասատինա եռօրեայ բանակում |
| Սեպտեմբեր 23 | Հայաստանի Անկախութեան Օրուայ Փառատօն |
| Նոյեմբեր 4 | ՍԴՀԿ-ի 120 Ամեակի Հանդիսութիւն |

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՌԱԴԻՕ ԵԹԵՐ ՇՕ**
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:00
Կլէնտէյլի 26-րդ կայանից


New 2006 KIA OPTIMA LX
More Power, V6
Buy For $179 Per Month
1 AT THIS PAYMENT
+99¢ per month. 84 payments at 5.99% APR financing on approved above-average credit. $4995 customer down payment + $2000 factory rebate equals $6995 total down payment. Sale price $17,596.04
New 2006 KIA SORENTO EX 2WD
$7,995
1 AT THIS NET SAVINGS
$7,995 net savings off MSRP includes a $4000 Factory Rebate, $2995 GK discount and $1000 Competitive Bonus.
YOUR PICK
New 2007 KIA RIO
Sale Price $8495
Factory Rebate -$500
1 AT THIS NET COST
The Kia Red-Tag Lease-A-Thon
With Low Down Payment
NEW 2007 KIA SPORTAGE LX
5-STAR CRASH SAFETY RATING National Highway Safety Admin.
Lease For Only $129 Per Month
1 AT THIS PAYMENT
+99¢ & tax per month 36-month closed-end lease on approved above-average credit. Cash from customer $2999.99 + $0 Security Deposit + $1000 lease cash* (*Must finance thru Ameri Credit). $3999.99 total drive-off fees due at lease signing, includes tax & license. 15¢ per miles in excess of 12K miles per year.
NEW 2007 KIA SPECTRA EX
Auto, PW, PL
Lease For Only $134 Per Month
1 AT THIS PAYMENT
+99¢ & tax per month 36-month closed-end lease on approved above-average credit. Cash from Customer $2999.99 + $0 Security Deposit + $750 lease cash* (*Must finance thru Ameri Credit) equals $3749.99 total drive-off fees due at lease at lease signing, includes tax & license. 15¢ per miles in excess of 12K miles per year.
NEW 2007 KIA OPTIMA LX
5-STAR CRASH SAFETY RATING National Highway Safety Admin.
Auto, PW, PL
Lease For Only $139 Per Month
1 AT THIS PAYMENT
NEW 2007 KIA RONDO
GREAT MPG & GREAT MP3 PLAYER* *Available on all trims except base model.
Use the 3rd row to seat up to 7 people!*
Lease For Only $159 Per Month
1 AT THIS PAYMENT
+99¢ & tax per month 36-month closed-end lease on approved above-average credit. Cash from Customer $2999.99 + $0 Security Deposit + $750 Owner Loyalty equals $3749.99 total drive-off fees due at lease signing, includes tax & license. 15¢ per miles in excess of 12K miles per year.
NEW 2007 KIA SORENTO LX
5-STAR CRASH SAFETY RATING National Highway Safety Admin.
Lease For Only $174 Per Month
1 AT THIS PAYMENT
+99¢ & Tax per month. 36-month closed-end lease on approved above-average credit. Cash from customer $2999.99 + $0 security deposit + $2000 lease cash* (*Must finance thru AmeriCredit) + $1000 Owner Loyalty equals $5999.99 total drive-off due at lease signing. 15¢ per miles in excess of 12K miles per year.
NEW 2007 KIA SEDONA
5-STAR CRASH SAFETY RATING National Highway Safety Admin.
Auto, PW, PL
Lease For Only $209 Per Month
1 AT THIS PAYMENT
VIEW PICTURES
Check Out These Vehicles & More @:
www.glendalekia.com
Pre-Owned Vehicle | KBB Retail | Our Price | Or Buy For
'04 Kia Spectra LS SDN $9670 $6495 $75 Mo (K70326B/303948)
'03 Mitsubishi Diamante LS SDN $14,685 $10,995 $163 Mo Auto, Air, PPkg, & More. (K61826A/011735)
'02 Toyota Camry SDN $14,130 $11,995 $182 Mo Air, Auto, PPkg, & More. (P60715/040786)
'03 Nissan Frontier Supercharged King Cab $15,210 $13,495 $208 Mo Air, Auto, PPkg, Loaded. (P61024/427397)
'04 Mazda RX-8 Coupe $18,165 $14,495 $230 Mo Air, 6-Speed, Loaded. (P70518/109875)
'06 Mazda3 S $20,255 $16,495 $266 Mo Air, PPkg, ABS, & More. Previous Rental. (P60644/499232)
'03 Toyota Highlander SUV $19,675 $16,495 $269 Mo Air, Auto, PPkg, More. (P60567/115665)
'06 Suzuki XL-7 SUV $20,805 $16,495 $269 Mo Air, Auto, PPkg, Loaded. Previous Rental. (P70373/105205)
'06 Scion tC Coupe $19,330 $16,995 $279 Mo Air, Auto, PPkg, More. (P61198/070951)
'06 Honda Element LX SUV $21,360 $17,495 $285 Mo Air, Auto, PPkg, More. (K70546DA/005382)
'05 Jeep Wrangler SUV $21,190 $18,495 $304 Mo Auto, Air, CD, More. (P70288/315604)
'03 Infiniti I35 SDN $19,465 $18,495 $308 Mo Auto, Air, PPkg, Loaded. (P60112/103945)
'04 Lincoln LS V8 SDN $23,475 $19,995 $333 Mo Auto, Air, PPkg, Lthr & More. Previous Rental. (P50106/646521)
'04 Ford Expedition $24,735 $20,995 $356 Mo Air, Auto, PPKG, More. (P70459/B14590)
'02 Mercedes-Benz C320 WGN $22,050 $21,495 $367 Mo Air, Auto, PPkg & More. (P50745/151085)
'03 Toyota Sequoia SR5 $24,205 $22,495 $385 Mo Air, Auto, PPkg, & More. (P50488/139604)
'02 Lexus RX300 SUV $25,435 $22,995 $396 Mo Air, Auto, PPkg, & More. (P60211/288749)
'05 Acura TSX SDN $25,565 $23,995 $411 Mo Air, Auto, PPkg, Navigation, More. (P70428/008817)
'04 Infiniti G35 CP $28,125 $24,495 $420 Mo Auto, Air, Loaded. (P70354/803738)
'05 Chrysler Crossfire Limited $26,300 $24,495 $424 Mo Air, PPKG, Loaded. (P70635/057759)
'05 Infiniti G35 CP $29,310 $26,495 $460 Mo Air, Auto, PPkg, Loaded. (P70643/403074)
'06 Audi A4 2.0T SDN $30,605 $27,495 $482 Mo Auto, Air, PPkg, & More. (P70419/189354)
'05 Ford Thunderbird 50th Anniversary $35,910 $28,495 $502 Mo Auto, Air, PPkg, Loaded. (P70310/105369)
'04 Infiniti FX45 SUV $35,310 $28,995 $507 Mo Auto, Air, Pwr Pkg, Loaded. (P70540/400383)
'04 BMW 525i SDN $35,640 $32,995 $589 Mo Auto, Air, PPkg, More. (P70345/174099)
'04 BMW 745Li SDN $55,850 $45,995 $841 Mo Loaded, Navigation, Low Miles. (P70356/D54963)
GLENDALE KIA
The Power to Surprise
#1 VOLUME KIA DEALER IN CA!
College Grads Ask about our $400 Bonus Rebate!
2242 San Fernando Road, LA 90065
TOLL FREE: 866-211-8000
SE HABLA ESPAÑOL
10 YEAR 100,000 MILE WARRANTY
All advertised prices exclude government fees and taxes, any finance charges, any dealer document preparation charge and any emission testing charge. All vehicles are on approval of credit. Rebates are not to be used with any special APR programs. Kelley Blue Book prices are based on July/August '07 Kelley Blue Book. Offer ends the close of business date of publication.